

4078

Zwejný štýl

2-ry exemplár

491-99-8

G-15₁₁ 18¹⁸

1282

2010

Միջ. գր. 3. Վիպարիսյանի 3. համ. 107 համ. 19.

3153

306

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒԻ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԴ-ՏԱՐՈՒԱՅ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Գ

Յ Օ Ր Ի Ն Ե Յ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԱՐԵԱՆՅ

Թագաւի կրթութիւնը համեմատել են երե-
կայի կրթութեան հետ. աւելի իրաւացի կը
լինէր երեկայի կրթութիւնը համեմատել
Թագաւի կրթութեան հետ
ԲԻԻՅՅՈՆ

Տ Փ Խ Ի Ս

2002

ՏՈՒՐԱՆ Մ. ՎԱՐԳԱՆԵՐԱՆՅԻ ԵՆ ԸՆԿ.
1882

491.99-8
Ը-15

491.99-8
15075088

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒՐ

428
166-ՆԱ
ՈՒՍՈՒՅԻՉ

ԱԶԳԱՅԻՆ ԳՊՐԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐՈՒԱՅ

Դ Ա Ս Ա Գ Ի Բ Գ

Յ Օ Ր Ի Ն Ե Ց

ՅՈՎՀԱՆՆԻՍ ՆԱԶԱՐԵԱՆՅ



Թուժակի կրթութիւնը համեմատել են երե-
խայի կրթութեան հետ. ունելի երաւացի կը
լինէր երեխայի կրթութիւնը համեմատել
թուժակի կրթութեան հետ.

ԲԻԻՅՅՈՆ

(1002 / 8890)

19972 - 59

Տ Փ Խ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. ԳՐԱԳՆՆԵԱՆՏԻ

1882



36787

Handwritten numbers and faint mirrored text.

Handwritten text, possibly a date or reference.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a name or title.

Faint mirrored text, likely bleed-through from the reverse side.

Доволено цензурою. Тифлисъ, 6-го Мая, 1882 года.

Тип. М. Вартамянца и К°. противъ Троиц. цер. д. № 11.

ԱԶԳԻ ԱՆՁՆԱՆՈՒԻՐ ՄՇԱԿ

ԵՒ

ՆՈՐԱ ՆՈՐ ԼԵԶՈՒԻ

ՀԻՄՆԱՔԱՐԸ ԶԳՈՂ

ՊՐՈՑԵՍՍՈՐ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

ԱՆՁՆՁԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԻԻՐ ՓՈՔՐԻԿ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Յօրհոգը:

Հայոց ազգի տունը պիտոյ է և կարող է միայն շինուիլ նորա լեզուի շինութեամբը:

Հայն իւր լեզուն պարտական է համարել՝ իւր ամենասուրբ բանը, իւր աչքի լոյսը, իւր սրտի արիւնը, իւր կենդանութեան հիմքը, իւր պատիւն ու պարծանքը:

Ս. Ն ա գ ա ղ ե ա ն ց .

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ա.

Իսասագրքիս մասին մի քանի առաջնորդող խօսք:—Սորա շէնքը կառուցուած է այն հաստատ հմբի վերայ, որ ուսումնասիրել են տալիս մեզ այս գրքով իւր լեզուն սովորող մանկան մտաւոր կարողութիւնները: Այն մանուկը, որ գործ պէտք է ունենայ այս դասագրքի հետ, այն մանուկը, որի համար սա յորինուած է, տակաւին այն աստիճան զարգացած չէ, որ կարողանայ հասկանալ մտքերի կազմակերպուելու եղանակները: Նա դեռ այնքան հասունացած չէ, որ կարողանայ գտնել այն նուրբ թելը ծայրը, որի վերայ՝ ինչպէս օղակները շղթայի վերայ, հագցրուած են մտքի մասունքը. որոնց ամբողջութիւնը մի որոշ գաղափար է ստեղծում իւր մանկական ուղեղում:

Այդ հասակի մանուկը միայն ընդհատուած իմաստներից է կարողանում մի հասկացողութիւն կազմել: Նորա համար խօսակցութեան բաղադրիչ մասները պէտք է որոշ որոշ լինեն, իրար հետ չմիացած, ո՛չ մի կապով չկապուած. խօսքի, մտքի իւրաքանչիւր մասը, եթէ կարելի է այսպէս ասել, պէտք է շօշափելի լինի իւր ուղեղի համար: Ի՛նչ որ չափահասը երեւակայելով է ըմբռնում, այն մանուկը մտաւորապէս շօշափելով պէտք է ըմբռնի:

Ահա՛ այս պատճառով էլ մեր ձեռնարկած հասակի մանկանց մտաւոր ունակութիւնները և նոցա ի՛նչ աստիճանի զարգացման հասած լինելը ինկատի ունենալով, և այդ հանգամանքը մեր գործի համար հիմք ընդունելով՝ մեր դասագրքի մէջ պարունակուած բոլոր յօդուածներն էլ իրանց կազմութեան ձևով ու տեսակով աշխատել ենք յարմարեցնել մեր մանկանը: Թէպէտ հետզհետէ առաջ գնալով՝ բաւական շօշափելի

կերպով նկատուած է մեր յօդուածների այդ օրինակ կազմութեան աստիճանաբար բարդութիւնը:

Մեր բոլոր յօդուածները ծայրէ ի ծայր այդ ուղղութեան դրողն են կրում իրանց վերայ և յօդուածներից մի քանիսը կր կնոզաբար են կազմուած. նախ ընդհատ իմաստներով, ապա ի մի ձուլուած մտքերով:

Երգարև, այն գիրքը, որ տալիս ենք արդէն կարգաւորունակութիւն ձեռք բերած մանուկներին, նոցա ապագայի համար շատ մեծ նշանակութիւն և վսեմ խորհուրդ պէտք է ունենայ իւր մէջ թաքցրած: Սակայն, քանի որ մեր կեանքը մեզ զլանում է այդ նպատակի համար ըստ ամենայնի յարմար նիւթեր մատակարարելու և քանի որ ուրիշ, ընդհանուր մարդկային նշանակութիւն ունեցող գրուածքներն էլ մեր ընտրած հասակի մանուկներին անմատչելի լինելու շատ անյարմարութիւնների հետ կարող են կապուած լինել,— ուստի առ այժմ ստիպուած ենք ունեցածներովս գոհ մնալ, թէև նոքա միայն կիսով չափ են մեր աղգային կեանքի պատկերը կրում իրանց վերայ:

Մանուկներին առաջարկուող դասն էլ երբէք չպէտք է կազմուած լինի այնպիսի անմարսելի մտքերից, որոնք առանց ուսուցչի բացատրութեան չեն կարողանում տեղ գրտնել նոցա մանկական ուղեղում: Ի՞նչն է ստիպում մեզ այնպիսի ծանր դարձուածներով շարայարել մտքերը, որ կըրկին և կրկին պարտաւորուած լինենք նորանոր մեկնութիւններով հասկացնել մանուկներին: Ինչո՞ւ չպէտք է ուղղակի այնպիսի թեթև ու դիւրամբոնելի ձևով խօսենք նոցա հետ, որ առանց որ և իցէ պարզաբանութեան՝ ուղղակի հասկանան գրքի խօսքերը: Ինչո՞ւ պէտք է թարգմանչի միջնորդութեամբ խօսենք, երբ կարող ենք առանց որ և իցէ միջնորդի միմեանց հասկանալ:

Մեր դասագիրքը հաստատ մնալով այդ սկզբունքին՝ բոլորովն զանազանուած է այն բոլոր դասագրքերից, որոնք

մինչև օրս յօրինուած են մեր ձեռնարկած հասակի մանուկների համար:

Մանուկներին քերականական թուերի և ժամանակի գլխաւոր բաժանմունքների վերայ հասկացողութիւն տալու համար բերում ենք այստեղ մի քանի վարժութիւններ: Անտարակոյս, այս կէտում վարժուելուց յետոյ՝ ուսուցիչն ինքը կրբեմնապէս դասերի միջից թեթև նախադասութիւններ թուով փոխել կը տայ: Պարել է նա՛ւ ամբողջ յօդուածը այդպէս փոխել տալ:

Ուղղագրութեան կանոններին ևս մանուկները իրանց հասկացողութեան համապատասխան տեղեակ պէտք է լինեն: Եւ որովհետև նոցա հասկացողութիւնը դեռ ևս շատ նեղ ու սահմանափակ է, այսպատճառով նոցա աւանդելի ուղղագրութիւնը պէտք է կայանայ միայն և եթ՝ ամենակարևոր կանոններ հաղորդելու մէջ: Հնչական մեթոդն էլ բաւական կարող է դիւրացնել ուղղագրութեան գործը:

Ահա՛ կարևոր կանոնները.

1. Ա տառով վերջացող բառերի վերջը յ, դնելը (բացառութիւն կազմում են դերանունները):
2. Ա տառից յետոյ «ւ», գրելը:
3. Յատուկ անունը մեծ տառով սկսելը:
4. Ա տառով վերջացող յատուկ անունների վերջը (ուղղական հոլովում) «յ», չգրելը:
5. Հրամայեական բառերի վերջը յ, չգրելը:
6. Անունների յոգնակի թուումը և բայերի ու դերբայերի վերջաւորութեան մէջ «ե», գրելը:
7. Բացատրել որ ո՛չ մի բառ չէ վերջանում «ե», տառով:
8. Ո տառի գործածութիւնը այն բառերի սկզբումը՝ որոնց արտասանելու ժամանակ առաջ «վօ», է լսուում:

9. Թէ՛ բացարձակ և Թէ՛ դասական թուական անուններն գրելը:

10. Ա, յ, ո, յ, ե ա և ի և երկբարբառների գրելը:

11. Է, յ և օ տառերի գործածութիւնը:

12. Ռ և ր տառերի ուղղագրութեան մէջ արտասանութեամբ վարժեցնելը:

Բացառութիւնները միայն պատահած ժամանակը պէտք է յիշել. այն էլ ո՛չ բոլորը. այլ ամէն անգամ միայն մէկ պատահածը:

Բայց մեր ասելքը ուղղագրութեան մասին վերջացնելուց առաջ մի խօսք ևս ասելու պէտք ենք զգում:—Վրահայոց մանուկները իրանց ընտանեկան շրջանում մեծ մասամբ մայրենի լեզուով չզարգանալով առ հասարակ ենթարկում են վրաց լեզուի ազդեցութեանը, որի վատ հետևանքներից մէկն էլ այն է լինում որ նորա՝ վրաց լեզուի մէջ «Ռ» տառի բացակայութեան պատճառով ամենեւին չեն կարողանում արտասանել այդ տառը. այլ միշտ դորա փոխանակ «Բ» են արտասանում ու գրում: Եւ որովհետեւ այդ տառը գրեթէ ո՛չ մի ուղղագրական կանոնի չէ ենթարկում և իսկապէս ուղղագրութիւնը դորա ուղիղ արտասանելու մէջ է կայանում, ուստի պէտք է շատանալ միայն արտասանութեանը ընտելացնելովը: Նոյնը պէտք է ասել նաև (բառերի վերջը գործածուող) «ը», տառի մասին:

Սակայն, որպէս զի այս կէտում ևս կարողանանք թեթևացնել Թէ՛ ուսանողի և Թէ՛ ուսուցչի աշխատանքը, մենք գրքիս վերջը առաջ ենք բերում մի ցանկ այն բոլոր բառերից, որոնց մէջ կայ յիշեալ տառը: Մանուկը միշտ աչքի առաջ ունենալով այդ բառերը՝ հետզհետէ կը վարժուի նոցա պատկերը իւր յիշողութեան մէջ ապաւորելովը:

Պէտք է ինկատի ունենալ որ դորա «ռ» տառը ունեցող գրեթէ բոլոր բառերն են: Եւ, եթէ մանուկը մի տարուայ մէջ չի կարողանայ իւրացնել այդ բառերի գրութեան

ձևը, յաջորդ տարիներումն էլ իւր հարցերով կարող է դիմել այդ փոքրիկ ցանկին, որ նորան միշտ կարող է գոհ կացուցանել:

Բոլոր «Ռ» տառ ունեցող բառերի թիւն է 200:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ ուրիշ տեղի հայերի մասին ևս, որոնց արտասանութիւնը նոյնպէս աղաւաղուած է որ և իցէ օտար լեզուի ազդեցութեան ներքոյ պէտք է պարտուպատշաճ կերպով խնամք տանել այդ թերութիւնը վերացնելու համար:

Իսկ ամէն տեղի հայ մանուկների դործը առաւել ևս թեթևացնելու համար գրքիս վերջումը կցում ենք նաև «է, յ և օ» տառերը ունեցող բոլոր բառերը, որոնց իւրաքանչիւրի թիւը ընդամենը 60 է:—Գորա գրեթէ միայն հասարակ, արմատական բառերն են: Գծուար չէ մանկանը հասկացնել որ դոցանից ածանցուած բոլոր բառերն էլ նոյն տառերովը պէտք է գրուեն: Երբ մանուկը կը գիտենայ թէ ո՛ր բառերն են գրուում «է, յ, ո և օ» տառերով, որոնց թիւը այգբան սահմանափակ է, նա դիւրութեամբ կ'իմանայ որ մնացած բոլոր հարիւրաւոր ու հազարաւոր բառերը գրուում են «է, յ, ր և ո» տառերով:

Աւելորդ է ասելը որ մանուկները պէտք է ուղղեն գրքիս մէջ դիտմամբ տառասխալներով գրուած վարժութիւնները:

Ինչ վերաբերում է կէտագրութեանը և առոգանութեանը, այս հասակի համար բաւական է միայն բացատրել վերջակէտը (:), հարցականը (?) և հրամայականը ('):

Գ.

Զգալով նկարագրական չոր ու ցամաք յօդուածների ո՛չ միայն անմարտելի այլ և անօգուտ լինելը՝ մենք խորշելով այդ ուղղութիւնից, ներկայացնում ենք մի դասագիրք որ գրեթէ սկզբից մինչև վերջը խօսակցական դասեր է ամփո-

փոճմ իւր մէջ: Նկարագրութիւնը կարող է տեղի ունենալ գասագրքից դուրս:

Մանաւանդ չպէտք է մոռանալ այն հանգամանքը որ մանուկներին միշտ ծամած պատառի սպասել տալով մենք մեռցնում ենք նոցա մէջ գիտակցաբար զարգանալու միջոցները: Թոյլ չտալով որ նոքա ինքնուրոյնաբար իրանց սեպհահան ոյժերով ձեռք բերեն ամէն բան:

Եւ որպէս զի մանուկներին անծանօթ եղած բաները չմաշուին, չջնջուին, ու չմոռացուին նոցա յիշողութիւնից՝ առանց նոցա փոքրիկ ուղեղի մէջ մի հասկացողութեան հետք թողնելու, մենք գրքիս վերջումը կցում ենք այդ բոլոր բաներից կազմուած մի փոքրիկ բառարան:

Ամէն տեղի ուսուցիչ կարող է իւրաքանչիւր դասի սկզբումը արտագրել տալ մանուկներին նոր յօդուածի բառերը, գրել տալով նոցա դիմացը իրանց բացատրութիւնները տեղական բառերով: Նոքա էլ իրանց ցանկացած բառերի մեկնութիւնները որոնելիս հեշտութեամբ կարող են գտնել:

Ահա՛ վերջապէս այն գլխաւոր աղբիւրները, որոնցից մենք օգուտ ենք քաղել այս դասագիրքը կազմելիս.— 1. Հայկական յիսնակառակ— Ահա՛ն վարդապետ պարտիզակցի, 2. Հա՛նր վէպեր ու դասեր— Մ. Մամուրեան, 3. Հետաբեր՝ ամսագիր, 4. Հա՛ղար և մի առակաւոր բանք— Գաբրիէլ եպիսկոպոս Այվազեան և 5. Հա՛նկական երգեր— Գամառ-Քաթիպա:

Մեր խօսքերը շատ չերկարացնելու համար՝ շատ բան էլ թողնում ենք առանց բացատրութեան: Բանիբուն ուսուցչին համար ինքը գիրքը մեզնից աւելի կը խօսի:

6 Յունուարի 1882.

S փ խ ս .

... անցնում է ... անցնում է ... անցնում է ...

1. Մի խանութպան կար: Նա ուզում էր մի երեխայ: Խանութպանը երեխան ուզում էր իւր խանութի համար: Նա լրագրումը գրեց: Նա գրեց թէ. — Մի երեխայ է հարկաւոր: Միւս օրը խանութպանի մօտ եկան երեխաներ: Նորա մօտ եկան յիսուն երեխայ: Այդ երեխաները ցանկանում էին խանութի աշակերտ դառնալ: Բայց խանութպանը ուզում էր միայն մի երեխայ: Նա ոչ մէկին չէր ճանաչում: Այդ պատճառով նա ամէնքին լեռ ուղարկեց: Նա շատ մտածեց այս բանի վերայ: Յետոյ լրագրումը գրեց թէ. — Հարկաւոր է մի այնպիսի երեխայ, որ հնազանդ լինի իւր հօրն ու մօրը: Գորանից լետոյ անց կացաւ երեք օր:

ՀՆԱԶԱՆԻ ԵՐԵՒԱՅ

1. Մի խանութպան կար: Նա ուզում էր մի երեխայ: Խանութպանը երեխան ուզում էր իւր խանութի համար: Նա լրագրումը գրեց: Նա գրեց թէ. — Մի երեխայ է հարկաւոր: Միւս օրը խանութպանի մօտ եկան երեխաներ: Նորա մօտ եկան յիսուն երեխայ: Այդ երեխաները ցանկանում էին խանութի աշակերտ դառնալ: Բայց խանութպանը ուզում էր միայն մի երեխայ: Նա ոչ մէկին չէր ճանաչում: Այդ պատճառով նա ամէնքին լեռ ուղարկեց: Նա շատ մտածեց այս բանի վերայ: Յետոյ լրագրումը գրեց թէ. — Հարկաւոր է մի այնպիսի երեխայ, որ հնազանդ լինի իւր հօրն ու մօրը: Գորանից լետոյ անց կացաւ երեք օր:

Երեք օրուայ մէջ եկան միայն երկու երեխայ: Այդ երկու երեխաները Հնազանդ էին իրանց ծնողներին:

Մի խանութպան իւր խանութի համար մի երեխայ էր ուզում:

Նա լրագրումը գրեց թէ.

—Հարկաւոր է մի երեխայ:

Միւս օրը նորա մօտ եկան յիսուն երեխայ, որոնք ցանկանում էին խանութի աշակերտ դառնալ:

Խանութպանը այդ յիսուն երեխաներից ո՛չ մէկին չէր ճանաչում:

Այդ պատճառով ամէնքին էլ լետ ուղարկեց:

Նա շատ մտածեց այս բանի վերայ, և վերջապէս լրագրումը գրեց այսպէս.

—Հարկաւոր է մի այնպիսի երեխայ, որ Հնազանդ լինի իւր հօրն ու մօրը:

Անց կացաւ երեք օր. և միայն երկու երեխայ եկան, որոնք Հնազանդ էին իրանց ծնողներին:

ԱՍԱՅՈՒՄ.—Չաւակ է. մեծ վաստակ է թէ ունի շէնք ու շնորհ.

Անողորմ աւագակ է՝

Թէ Հնազանդ չէ հօրն ու մօր:

Մ Է Կ

Մի խանութպան մի երեխայ էր ուզում: Խանութպանը ո՛չ մէկին չէր ճանաչում:

Նա շատ մտածեց այս բանի վերայ:

Շ ա ս

Երկու խանութպան մի մի երեխայ էին ուզում: Խանութպանները ո՛չ մէկին չէին ճանաչում: Նոքա շատ մտածեցին այս բանի վերայ:

Ուղագրումը.— Երեխայ, քահանայ, առարկայ...

2.

ԵՐԵՒԱՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Մի փոքրիկ աղջիկ կար:

Այն աղջիկը նստել էր պարտիզումը:

Ռուբը մի փոքրիկ կատու կար:

Այն կատուն շատ սիրուն էր:

Փոքրիկ աղջիկը կանչեց փոքրիկ կատուին.

—Փիսիկ, փիսիկ, արի փիսիկ:

Փիսիկը գնաց փոքրիկ աղջկայ մօտ:

Փիսիկը սկսեց նորա հետ խաղալ. և մըռ, մըռ էր անում:

Փոքրիկ աղջիկը ուրախ էր որ խաղում էր փոքրիկ կատուի հետ:

Փոքրիկ աղջիկը փայփայում էր կատուին:

Այն ժամանակ նոքա իրար հետ սիրով էին բարեկամ էին:

Բայց փոքրիկ աղջկայ բարկութիւնը շարժուեցաւ:

Նա փոքրիկ կատուի պոչից քաշեց:

Այն ժամանակ մեր փիսիկը նեղացաւ:

Նա էլ մըռ, մըռ չարեց. այլ յանկարծ բըֆ, բըֆ արեց:

Փոքրիկ կատունն փոքրիկ աղջկայ ձեռքը ճանկուեց:
Իորանից լետոյ նոքա իրարից սառեցան. էլ բարե-
կամ չէին:

Փոքրիկ կատունն էլ չուզեց խաղալ փոքրիկ աղջ-
կայ հետ:

Նա թողեց նորան գնաց:

Եւ փոքրիկ աղջիկը մնաց մէնակ:

Չարերը բարեկամ չուենեն:

Մի փոքրիկ աղջիկ խաղում էր մի փոքրիկ կա-
տուի հետ: Բայց քիչ ժամանակից լետոյ աղջկայ բար-
կութիւնը շարժուեցաւ ու կատուի պոչից քաշեց:

Կատունն էլ նեղացաւ. նորա ձեռքը ճանկուեց ու հե-
ռացաւ:

ԱՍՏՅՈՒԱԾ.— Ջրադանը երկու քարից,

Սէրը պէտք է երկու կողմից.

Մէնակ ձեռքը ձայն չի հանի,

Չայն կը լսուի երկու ձեռքից:

ՀԱՆԵԼՈՒԿ.— 1. Իբրև տիկին ծանր կը գնայ,

Պարանը ետեից քաշ կը գայ,

Կը նստի ոսկէ բարձի վերայ:

Ես գնում եմ ուսումնարան: Եր էլ կը գամ քեզ
հետ:

Ի ու ճանապարհին խաղում ես և ուշանում ենք:
Ես էլ չեմ գայ քեզ հետ:

Մ է կ

Այն կատունն շատ սիրուն էր:

Նա փոքրիկ կատուի պոչից քաշեց:

Նա թողեց նորան գնաց:

Շ ա ՞

Այն կատուները շատ սիրուն էին:

Նոքա փոքրիկ կատուների պոչերից քաշեցին:

Նոքա թողին նոցա գնացին:

Վարժուլ թիւնն զօն ոց սմ

Ես տեսա մի երեխա: Իմ գիրքը ստացաւ: Մեր
պարտիզումը վարդ շատ կա: Ես սեղանի վերա գրիչ չը
տեսա: Մեր տունն մէկ քահանա պէտք է գա: Մարդ
ինչքան մեծանա, պէտք է խելօքանա: Ո՛վ կը խաղա,
նա կը կաղա: Նա մի երեխա տեսաւ:

Ուղիւղիւղ-նիւն.— Տեսաւ, շարժուեցաւ, նեղացաւ,
լաւ, հաւ, հաւասար, հարկաւոր...:

* *

3.

ԾՆՈՂԱՍԷՐ ԵՐԵՒԱՅ

Մի գիւղի մէջ կար մի բարի քահանայ:

Այդ քահանան մի օր տեսաւ մի երեխայ:

Այն երեխան փոքրիկ էր:

Նա հազած ունէր հին ու պատառոտուած շորեր:

Քահանան երեխային տարաւ իրանց տուն:
Նա նորան հաց ու միս տուեց, որ ուտէ:
Բայց երեխան ձեռք չէր տալիս այն հացին ու մսին:
Քահանան երեխային ասաց.

—Որդի, ինչո՞ւ չես ուտում այդ հացն ու միսը:
Երեխան քահանային ասաց.

—Շնորհակա՛լ եմ, տէր հայր:
Ես այս հացն ու միսը պահում եմ իմ մօր համար:

Իմ մայրը հիւանդ է:
Քահանան նորան ասաց.

—Հոգ չէ. դու կեր այդ կերակուրը:
Ես քո մօր համար էլ կ'ուղարկեմ հաց ու միս:
Երեխան ասաց.

—Շնտ լաւ, տէր հայր:

Այս չոր հացը ես կ'ուտեմ. իսկ միսը կը տանեմ կը
տամ իմ մօրը:

Մի դիւղի մէջ կար մի բարի քահանայ:

Մէկ օր այդ քահանան տեսաւ մի փոքրիկ երե-
խայ, որ հագած ունէր հին ու պատառոտուած շորեր:
Քահանան տուն տարաւ երեխային և հաց ու միս
տուեց, որ ուտէ:

Բայց երեխան ձեռք չէր տալիս իւր առաջը դրուած
հացին ու մսին:

—Որդի, ինչո՞ւ չես ուտում, հարցրեց քահանան:

—Շնորհակա՛լ եմ, տէր հայր, պատասխանեց երե-
խան. այդ հացն ու միսը պահում եմ իմ մօր համար,
որ հիւանդ է:

—Հոգ չէ. ասաց քահանան, դու կերակուրդ կեր.
Ես մօրդ էլ կ'ուղարկեմ:

—Շնտ լաւ, տէր հայր, ասաց երեխան:

Ես այս չոր հացը կ'ուտեմ. իսկ միսը կը տանեմ
մօրս կը տամ:

ԱՍԱՅՈՒԱԾ. — Փնջի միջում ձընծաղիկը
Մանուշակի հոտն է առնում.
Լաւ ընկերաց մէջ մանկիկը
Օրինակի լաւն է առնում:

Մ է Կ

Քահանան տեսաւ մի երեխայ:

Երեխան չէր ուտում կերակուրը:

Որդի, ինչո՞ւ չես ուտում:

Շ ա տ

Քահանաները տեսան երեխաներ:

Երեխաները չէին ուտում կերակուրը:

Որդիք, ինչո՞ւ չէք ուտում:

Ի մ մայրը սիրում է ինձ: Մայրս սիրում է ինձ:

Ես սիրում եմ իմ մօրը: Ես սիրում եմ մօրս:

Քո մայրը սիրում է քեզ: Մայրդ սիրում է քեզ:

Դու սիրում ես քո մօրը: Դու սիրում ես մօրդ:

Վ ա ր ժ ու ւ թ ի ւ ն

Երեխան հացը կերավ. իսկ միսը տարաւ իւր մօր
համար:

Իմ գավազանը կոտրուեցավ: Երեխաի գլուխը ցա-
վում է:

Ես գործս աւարտեցի: Ով լավ կարգա, նա ընծա
կը ստանա: Մենք մի հավ ունէինք, կորավ: Արշակը
լավ տղա է:

Ողբագրություն. — Արշակ, Արամ, Տիգրան...
Հայկանուշ, Աշխեն, Մարիամ...:

* *

4.

Ծ Ո Յ Լ Տ Ղ Ա Յ

Մեկ ծայր տղայ կար:

Նա մինչև կեսօրը քնում էր. երբ գարթնում էր, Հաց էր ուտում. լաւ կշտանում էր և էլի պառկում քնում էր:

Այսպէս նա անում էր ամէն օր:

Նա ոչինչ չէր շինում. ոչ ուսումնարան էր գնում, և ոչ մի արհեստ էր սովորում:

Այս պատճառով նա մի ամբողջ տարի ոչինչ չը սովորեց:

Այդպէս անցկացան շատ տարիներ:

Եւ նա մնաց սղարմելի տղայ:

Երբ մեծացաւ, դարձաւ քսան տարեկան, ամէնքի մօտ գանգատում էր:

Նա ասում էր թէ.

— Ես շատ անբաղձ եմ. ոչ մի կոպէկ չունեմ:

Յետոյ գնում էր ուրիշների մօտ՝ մուրացկանի պէս ողորմութիւն էր խնդրում:

Մի տղայ կար:

Նա փոքր ժամանակը ծուլացաւ, ոչինչ չսովորեց:

Այդ պատճառով երբ մեծացաւ, դարձաւ մուրացկան և սղարմութիւն էր խնդրում:

Մինչև կեսօր քուն եղար, Բնիցըդ էլար՝ Հաց կերար,

Հաց կերար ու կշտացար,

Կշտացար ու պառկեցար,

Այսպէս շատ տարի կացար...

Չիմա ինչու ես գանգատում,

Որ ուտելու Հաց չես գտնում:

ԱՍՍՅՈՒԱԾ. — Ինչ կ'անես՝ արա՛, որդի,

— մ զի ոտմա ս վատ ընկերոջ հետ մի մընայ:

— Ինչ կ'անես՝ արա՛, որդի,

— Իբազաբ ոմ իսկաւ ընկերից յետ մի մընայ:

Մ է կ

Ես կարդում եմ: Ի՞նչ գրում ես: Նա երգում է:

Ես կարդում եմ իմ գիրքը: Ի՞նչ գրում ես քո

դասը: Նա երգում է իւր երգը:

Շ ա տ

Մենք կարդում ենք: Ի՞նչ գրում էք: Նոքա երգում են:

Մենք կարդում ենք մեր գիրքը: Ի՞նչ գրում էք

ձեր դասը: Նոքա երգում են իրանց երգը:

Վ ա ը ժ ու թ իւ Ն

(Գրեցէք մէկի ձեռով:)

Մենք խաղում ենք: Ի՞նչ գնում էք ուսումնարան:

Նոքա նկարում են: Ի՞նչ շինում էք ձեր տունը: Նոքա

տնկում են իրանց ծառերը: Մենք սիրում ենք մեր

հօրը:

(Գրեցէք շատի ձեռով:)

Մայրը սիրում է իւր սրգուն: Որդին պատուում է իւր ծնողներին: ձնծղուկը մտնում է իւր բոյնը: Վարդը ծաղկում է իւր թփի վերայ: Թռչունը երգում է իւր վանդակումը: Մեր գրացին ջրում է իւր պարտեզը:

Վ ա ր ժ ու թ ի ւ ն

Հավը թռաւ նստեց ծառի վերա: Ես տեսա մի երեխա: Այսօր Սմբատը լավ է կարգում: Ես մէկ հավկիթ գտա: Գու աղափնու միս կերար. իսկ ես կաքավի միս կերա: Մեր եղիսարէթը լավ աղջիկ է: Զեր պառաւ տատը մեռավ: Ես յոգնեցա. թող հիմա բազրատը կարգա: Այս ծառը լավ պտուղ կը տա: Սպասավոր և ծառա միւլնոյն է:—Աննա, եղբայրդ եկավ:

Ուղղագիր—Ենն.—Աննա, Ովսաննա, Մարթա...:

Ես Գէորգի հետ կը գնամ ուսումնարան: Այնտեղից էլ միասին լետ կը դառնանք տուն:

* * *
5.

ԿՈՅՐ ԿԱՏՈՒ

Մի կատու կար:

Այդ կատուն մի տարուց լետոյ կուրացաւ:

Խեղճը սղորմելի ձայնով մլաւում էր:

Նա այս ու այն կողմն էր ընկնում. և հացի փրշրանք ու պանրի կտոր էր փնտռում:

Բայց այդ բաւական չէր:

Անիրաւ մկներն էլ մի նոր պատուհաս բերին նորա գլխին:

Մկան մէկը մի օր սաստիկ պինդ կծեց կատուի պոչը:

Կատուն ձայն տուեց.

—Այդ ինչ լրբութիւն է, որ մկներդ հաւաքուել էք ու պոչս կծոտում և ինձ ծաղրում էք:

Բայց, որ կոյր էր, ինչպէս պատժէր նոցա:

Վերջապէս այդ ցաւին մի ճար գտաւ:

Նա պառկեց խոհանոցումը և սաստիկ ձեւացաւ:

Երբ մկները իրանց ծակերից տեսան նորան, միաբերան ծուացին.

—Սատկել է. ինչ լաւ է. սիրտս հովացաւ. թող սաստկի:

Եկէք ուրեմն, վերջին անգամ էլ խայտառակենք նորա դիակը և ձգենք աղբանոցը:

Գեհ, սաստիկ կատու, պրծանք քո սուր ճանկերից. հիմա պատիժդ առ:

Այսպէս խօսելուց լետոյ մկները դուրս պրծան իրանց ծակերից:

Մէկը պոչիցն էր բռնում, միւսը գլխիցը, երրորդը ահանջներիցը:

Այսպէս առօք փառօք, մեծ ուրախութեամբ քաշքշում ու կամթում էին, իրանց սուր ձայնով սրւսրւացնում և թրևում էին կատուին:

Բայց նոքա դեռ ճանապարհի կէսը չէին անցել:

Մէկ էլ տեսնես՝ կատուն յանկարծ այս ու այն կողմը ցատկեց, մկներից շատերին ճանկեց խեղդոտեց:

Իսկ նոքա որոնք, ազատուեցան, այնպէս ներս թա-

փուռեցան իրանց ծակերը, որ մինչև հիմա էլ կատուի վախիցը դեռ չեն դուրս եկել:

Կար մի կատու, որ մի տարուց լետոյ կուրացան:

Նա շատ սղորմելի էր: Երբ մկները նորան ուղղպէս տեսան, սկսեցին սաստիկ նեղացնել նորան:

Վերջապէս կատուն մկներից ազատուելու համար պառկեց խոհանոցումը և սատկած ձևացաւ:

Մկները այդ տեսան ու շատ ուրախացան: Նոքա քաշքշեցին նորան և տանում էին աղբանսցը ձգելու:

Բայց ճանապարհի կիսումը կատուն լանկարձ նացանից շատերին ճանկեց ու խեղդոտեց:

ԱՍՍՅՈՒԱԾ.— Ուղիղ ման արի, ով եղբայր, Զգոյշ կաց, սաքըդ չը տահի. Թէ սահեցար ու ընկար, Կը լինեն խրփող խրփողի:

ԱՌԱԾ.— Ծառը որ վէր ընկնի, Կացնուորը կը շատանայ:

ԽՕՍԲԻ—ՉԵԻՆԻ.— Մէկի գլխին պատուհաս բերել. Ցաւին ճար գտնել.

Սիրտս հովացաւ. Առօք փառօք. Մէկ էլ տեսնես.

Խփող խփողի լինել.

Մ կան մէկը կծեց կատուի պոչը: Մի մուկ կծեց կատուի պոչը:

Մ արդու մէկը գնաց եկեղեցի: Մի մարդ գընաց եկեղեցի:

Մ կներ ք հաւաքուել էք: Գ ուք որ մկներ էք, հաւաքուել էք:

Ա շակերտներ « մտանք դասատուն...: Մ ենք որ աշակերտ ենք, մտանք դասատուն...:

Ծ ա շ.— Երբ բառի վերջը դրուած « նշանակում է իմ, և ք նշանակում է քո, այն ժամանակ « և ք կարգացում են ըս, ըք:

Ս.— Պոչ, հայր, գերք.— Պոչս, հայրս, գերքս.— Պոչքս, հայրքս, գերքքս.

Թաս, հարս, սպաս.— Թասս, հարսս, սպասս.— Թասքս, հարսքս, սպասքս.

Մէկ թատ ջուր տուէք: Թասս ինձ տուէք: Մենք մի հարս ունենք: Հարսս հիւանդ է: Ես սպաս կերայ: Սպասս ով կերաւ:

Գ.— Պոչ, հայր, գերք.— Պոչդ, հայրդ, գերքդ.— Պոչքդ, հայրքդ, գերքքդ.

Վարդ, զարդ, բուրդ.— Վարդդ, զարդդ, բուրդդ.— Վարդքդ, զարդքդ, բուրդքդ.

Ես վարդ քաղեցի: Վարդդ բացուել է: Գու զարդ չունես: Զարդդ չմոռանաս: Նա բուրդ է զգում: Բուրդդ հաւաքի:

Հ ա տ

Մկները տեսան կատուին:

Նոքա դուրս պրծան իրանց ծակերից:

Նոքա ներս թափուեցան իրանց ծակերը:

Մ է կ

Մուկը տեսաւ կատուին:

Նա դուրս պրծաւ իւր ծակից:

Նա ներս մտաւ իւր ծակը:

Վ ա ր ժ ու թ ի լ ը ն

Աշխարհումս սատանա չկա: Ես հափատում եմ տիգրանի ասածին: աչքի վերա յօնք կա: Մեր գավիթը լավ տղա է: Ես միշտ նորա լետ եմ խաղում: Սիրելի աննայ, հալրդ եկավ: Ես ազա, դու աղա. տեսնենք մեր ազը ո՞վ կ'ազա: Երբ լուսանա, հիւանդը կ'ուրախանա: Իմ քրոջ անունը մարթայ է:— Կու ալդ գիրքը կարդաւ և վաղը հետ տուր տիրոջը:

Ողջագրութիւն.— Կարդա՛, գնա, ասա՛...:

* * *

6.

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՔՍԻ

Մի փոքրիկ աղջիկ կար՝ վեց տարեկան:

Այս աղջկայ անունը Գայիանէ էր:

Գայիանէն շաքար շատ էր սիրում:

Մէկ օր մայրը նորա հետ դուրս գնաց զբօսնելու:

Գայիանէն ձեռքին ունէր մի փոքրիկ զամբիւղ:

Այդ զամբիւղի մէջ կար մի կտոր շաքար:

Նոքա ճանապարհին տեսան մի կոյր մուրացկան:

Այդ մուրացկանը նստած էր մի քարի վերայ:

Գայիանէն ասաց.

— Մայրիկ, ուզում եմ այս խեղճ կոյրին մի բան

տալիս:

Մայրը հինգ կոպէկ տուեց իւր աղջկան և ասաց.

— Ահա՛ քեզ փող, սաւր իրան:

Մուրացկանը լսեց Գայիանէի ոտքերի ձայնը:

Նա բարձր ձայնով ասաց.

— Աղջիկս, Աստուած օրհնէ՛ քեզ:

Շատ ապրես. որ ինչպէս կոյր ու խեղճ մարդու

ողորմութիւն տուիր:

Գայիանէն մօտեցաւ մօրը և հարցրեց.

— Ի՞նչ է ասում այս մուրացկանը:

Մայրը պատասխանեց.

— Նա կարծում է թէ դու տուիր ողորմութիւնը:

— Ողորմութիւնը ի՞նչ է, հարցրեց Գայիանէն:

— Ա՛յն է, ինչոր տալիս ես խեղճին, պատասխա-

նեց մայրը:

Մայր ու աղջիկ առաջ դնացին:

Գայիանէն սկսեց մտածել:

Նա յանկարծ վազեց մուրացկանի մօտ. տուեց նորան իւր շաքարը և ասաց.

— Բարի մարդ. երբ ես մեծանամ ու փող ունենամ, քեզ պէտք է տամ:

Բայց Հիմա փոքր եմ: մէնակ այս շաքարի կտորն ունեմ. այն էլ քեզ եմ տալիս:

Մուրացկանը քթի տակը ծիծաղեց, ժպտաց:

Նա ձեռքերը դէպի երկինք բարձրացրեց և սրբտանց աղօթք արեց, որ Աստուած Գայիանէին երկար կեանք տայ:

Գայիանէ անունով մի փոքրիկ աղջիկ կար, որ շաքար չափ էր սիրում:

Մէկ օր մայրը նորա Հետ դուրս գնաց զբօսնելու:

Գայիանէն ձեռքին մի փոքրիկ գամբիւղ ունէր, որի մէջ մի կտոր շաքար կար:

Նորա ճանապարհին տեսան մի կոյր մուրացկան, որ նստած էր մի քարի վերայ:

Գայիանէն մօրն ասաց.

— Մայրիկ, ուզում եմ այս խեղճ կոյրին մի բան տալ:

Մայրը Հինգ կոպէս տուեց և Գայիանէն տարաւ մուրացկանին տուեց:

Մուրացկանը օրհնեց նորան:

Յետոյ նա իւր շաքարն էլ տուեց և ասաց.

— Երբ ես մեծանամ ու փող ունենամ, քեզ կը տամ:

Մուրացկանը ժպտաց, ձեռքերը դէպի երկինք բարձրացրեց և սրտանց խնդրեց, որ Աստուած Գայիանէին երկար կեանք տայ:

ԱՍԱՅՈՒԱԾ. — Վայր ընկնողի ձեռքից բռնես,

Աստուած քո ձեռքից կը բռնէ.

Վայր ընկնողին ստքով խրվես,

Աստուած էլ գլխիդ կը խփէ:

ՀԱՆՆԵԼՈՒԿ. Հ. — Շորերը բուր կապնոյս Մ,

Մարմինը փայլուն, սպիտակ.

Գլուխը սուր՝ վեղարի նման,

Ոտքը խոնջի նրման տափակ:

ԽՕՄԲԻ ՉԵԻ. Քթի տակը ծիծաղել.

Սխալ. — Քիթ, արտասուք, կանաչ, ճանանչել, ամանչել.

Ուղիղ. — Քիթ, արտասուք, կանաչ, ճանանչել, ամանչել.

1002 / 10888

65-27661



Շ ա ա

Ես կարգում էի: Ի ու երգում էիր: Նա խաղում էր:
Ես կարգում էի նորա գիրքը: Նա պատմում էր
քո դասը: Ի ու կարում էիր իմ տետրակը:

Մ է կ

Հայրերը խրատում էին իրանց որդիքերանցը: Զագե-
րը վազում էին իրանց մօր ետևից: Գիւղացիները վա-
րում էին իրանց դաշտերը: Կանայքը կարում էին ի-
րանց զգեստները: Սոխակները երգում էին իրանց եր-
գերը:

—Ես իմ որդու զաւակն եմ: Իմ որդու որդին իմ
պապն է: Ես իմ քրոջ թոռն եմ: Իմ տատը իմ պապի
քայրն է: Իմ հայրը իմ պապի թոռն է: Իմ տատի որ-
դին իմ եղբայրն է: Իմ եղբօր հայրը իմ պապն է: Ես
իմ պապի որդին եմ: Իմ թոռը իմ պապի որդին է:—
Ուղիղ է:

Վ ա ր ժ ու Լ թ ի Լ ն

Մենք ծառա ունենք: Մայրս առողջացավ: Արտաշ,
գնայ մօրդ ասայ որ մեր տուն գա: Այ տղա, դուռը
բաց արայ: Երեկան խաղում է իւր կատուի յետ: Մեր
Տփխիսը մեծ քաղաք է: Ես պէտք է գնամ Ախալցխայ:
Դասդ լավ կարդայ: Իմ նամակը հետ ստացա: Սարկա-
վազը շուտով քահանա կը դառնա:—Արամ, երեսդ
լուայ, գրքերդ վեր առ, գնայ ուսումնարան:

Ուղղագրութիւն.— Գրքից, հացեր, քարեր...:

7.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՂԸ

Մէկ աշխարհ կայ. այնտեղ խիտ շատ Հայեր են
բնակում. այսինքն մեր ազգի մարդիկ:

Այն աշխարհի անունը Հայաստան է:

Հայերը ուրիշ տեղեր էլ են բնակում:

Միայն ուրիշ տեղեր Հայ քիչ կայ. և այն ուրիշ
աշխարհներն էլ Հայաստան չեն:

Այլ Ռուսի աշխարհը Ռուսաստան է, Թուրքի աշ-
խարհը Թուրքաստան է, և այլն:

Եթէ դուք լաւ ուսում առնէք և ձեր ուսումով
ուրիշ Հայերի օգնէք, մեր աշխարհը՝ Հայաստանը կը
լաւանայ:

Եթէ Հայ գիւղացին էլ քաղաքացու պէս ուսում
առնի, Հայաստանը կ'ուրախանայ և կը շէնանայ:

Եթէ որդին լաւ որդի է, եթէ նա լաւ մարդ է
դառնում, իւր ծնողների համար ուրախութիւն է:

Լաւ որդին իրանց տան աստղն է:

Լաւ որդին Հայաստանի աստղն է:

Պարզ գիշերը, երբ աստղերը դուրս են գալիս, եր-
կինքը զարգարում է:

Երկնքումը աստղերը պայծառ փայլում են, ինչ-
պէս երեկանի ցոլուն աչիկները:

Այն բոլոր աստղերի մէջը մի սիրուն աստղ կայ:

Մեր ուսումնարանումն էլ, հէնց այս դասատանը
մի խելօք երեխայ կայ:

Այն փայլուն աստղը նորա նման է:



Նա միշտ դասերը լաւ է սովորում, աշխատասեր է
և իւր ծնողների լաւ լաւ խրատներին ականջ է դնում:

Նա կը լինի մեր աշխարհի աստղը:

Ի՛նչքան ուրախ կը լինի մեր աշխարհը, եթէ այդ-
պիսի աստղեր նա շատ ունենայ:

Աստղերը պէճպէճ
Վերեն են փայլում
Նրման արդալի
Յարուն աչքերուն:
Մի սիրուն աստղիկ
Կայ երկրնքումը,
Գիտեմ, այն աստղը
Ունի է նրմանում:

Մեր զբաղւոյցումը
Կայ խելօք արդալ:
Դասերը միշտ լաւ
Սովորում է նա:
Աշխատասեր է,
Փիր ամէն բանին.—
Նա կը լինի աստղը
Մեր Հայաստանին:

Մ Ե Ղ Մ Ը

Հա՛, ծաղեղաւ արեգակը,

Հա՛, ծաղկեցաւ մանուշակը.

Մեղուն թողեց իւր փեթակը,

Տըգ-տըգալով, տըգ-տըգալով:

Մեղուն թրուաւ ծաղկից ծաղիկ

Մեղրը առաւ քաղցր-անուշիկ.

Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,

Պըգ-պըգալով, պըգ-պըգալով:

Քաղցր մեղրը՝ մանրը տըղոց,

Դեղին մոմը՝ ամէն սրբոց.

— Երբ որ Բակ չարերին՝ կըճ ու խայթոց, բնով ջան
ցգծնաար քաղցրակը ծալով— կըսկըծալով: ան ջան

պէտեալս դէ. սիրելոյստ սպաս պետեալս դէ

ՀԱՆԵՆՈՒԿՆԵՐ. — 3 — Խալիչայ ունեմ,

Թափ տալ չի լինի:

Ոսկի ունեմ,

Համրել չի լինի:

4.— Մայրս սաւան ունի՝

5.— Արծաթէ վանդակ,

Չէ կարողանում ծալել.

Մէջը ոսկէ ջուր:

Հայրս փող ունի,

Չէ կարողանում համրել:

6.— Բարձր սարի դռշին

կէս հաց:

7.— Բայր աւ եղբայր մի

տեղում մէկ մէկի ետեկից

վազում են, բայց չեն հաս-

նում:

(Գրեցէք շատի ձեով)

Ես գրեցի: Դու ջնջեցիր: Նա երգեց:—

Ես խմեցի քո թէյն: Նա կերաւ իմ հացը: Դու

օգնեցիր նորա եղբօրը:

Մ Է Կ

Դուք խմեցիք: Մենք կարեցինք: Նոքա քանդեցին: —
Մենք մաքրեցինք մեր շորերը: Դուք պատմեցիք
ձեր տեսածը: Նոքա սովորեցին ձեր պատմածը:

Շ ա տ

Ես կը գնամ: Դու կը մնաս: Նա կը խաղայ: —
Դու կը տեսնես իմ հօրը: Նա կը կանչէ քո մօրը:
Ես կը խնդրեմ իւր եղբօրը:

Մ Է Կ

Նոքա կը գրեն մեր դասերը: Դուք կարտագրէք
ձեր դասերը: Մենք կ'ուտենք նոցա բաժինը: Դուք կը
վերջացնէք ձեր գործերը: Նոքա կը տեսնեն մեր տես-
րակները: Մենք կը կարգանք նոցա գրածները:

Վարժութիւն

Դետի ափումը շատ աւագ կա: Իմ գրքերը տուն
տարա:

Ինչ խավար գիշեր է: Աշխտերը կարու՛մ է իւր
տետրակները: Ես հաւանում եմ այս աղջկա գրածը: Իմ
եղբայր երուանդը այսօր կը գա: Բոլոր ծառերը, թփե-
րը, ծաղիկներն ու խոտերը բոլո՛ւ են: — Ես իմ դասերը
գրեցի պրծա:

Ուղա՛ւորներն. — Դրեցի, նկարեցիր, ջնջեց, երգեցինք,
մաքրեցիք, սովորեցինք... — Գրեց, նկարել, ջնջել...:

* * *

8.

ԽՐԱՏ

Արշակը քանի որ փոքր էր, միշտ սուտ էր խօսում:
Նորա ծնողներն էլ չէին խրատում նորան:

Նա էլ դարձաւ ստախօս:

Մէկ օր հայրն ու մայրը տանը չէին:

Արշակը գնաց պարտեզը որ գուարճանայ:

Անց կացաւ փոքր ժամանակ:

Եւ ծառան լսեց որ մէկը իրան կանչում է:

Այդ կանչողը Արշակն էր:

Բայց ուրիշ անգամ Արշակը շատ էր կանչել նորան:

Այդպիսով ծաղրում էր նորան:

Այս պատճառով ծառան չգնաց նորա մօտ:

Նա ինքն իրան ասում էր.

— Ահա էլի ստախօսը կանչում է ինձ որ խաբէ:

Ես չեմ գնայ. ինչքան ուզում է, թող կանչի:

Բայց շուտով Արշակի ձայնը դադարեց:

Ե՛լ ոչինչ չէր լսում:

Ինքն էլ պարտիզումը չէր երևում:

Ծառան գնաց իմանալու թէ ինչ է պատահել նո-
րան:

Նա կանչում էր. «Ա՛րշակ, Ա՛րշակ». բայց լսող
չկար:

Պարտիզումը մի աւագան կար:

Ծառան ահ ու դողով այն կողմը վազեց:

Աւագանի ափումը մի ծառ կար:

Այն ծառի ճիւղը կտրուած էր:

Երբ նա կտրուած ճիւղը տեսաւ, շատ զարմնացաւ:

Նա մտաւ ջուրը:

Արշակը ջրի մէջը կիսամեռ ընկած էր:

Երբ հայրը լսեց այս, իսկոյն բժիշկ կանչեց:

Բժիշկը եկաւ և Արշակին դեղեր տուեց:

Արշակը քիչ շունչ քաշեց. կամաց կամաց խելքը

զլուխն եկաւ:

Այդ օրից Արշակը թողեց ստախօսութիւնը:

ԱՌԱՄՅԵՆԻ. — Սուտ աստղի տուներ կրակ ընկաւ:

Ոչ ոք չհաւատաց:—

Ստի ոտքերը կարճ են:

ԽՍԿԻ ԶԵՆ. — Խելքը զլուխը բերել:

Ուղի՞ չ է:

Հիւսնը պատեր է շինում. 'Իերձակը' կօշիկ կարում.
Որմնադիրը փայտ է տաշում. Ներկարարը ձի է պայտում.
Բարտաշը թել է ներկում. Զինորսը դեղ է անում.
Կօշկակարը ձուկ է որսում. Պայտառը շոր է ձևում.
Հացթուխը քար է տաշում. Բժիշկը հաց է թխում:

Վ ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Լ Ն

(Գրեցէք հակառակ ձևով:)

Ես չեմ ուզում խաղալ: Դու չես նստում քո տեղը:
Նա չէ գալիս մեր տուն: Մենք այսօր փայտ չենք կրտ-
րում: Դուք ձեր գասը չէք պատրաստում. Նոքա ու-
շագրութեամբ չեն լսում:

Ես մեր ծառերը չէի տնկում: Դու կանուխ չէիր
գարթում: Արշակն էլ շորերը չէր հագնում: Շաբաթ
օրը մենք տանը չէինք: Դուք նամակ չէիք գրում: Իմ
քոյրերը գուլպայ չէին գործում:

Վաղը ջրկիրը ջուր չի բերի: Դու լուացք չես անի:
Ես էլ մաքուր շապիկ չեմ ունենայ: Դուք լաւ մարդ
չէք դառնայ: Մենք ձեր երեսին չենք նայի: Ձեր բա-
րեկամներն էլ ձեզ չեն սիրի:

Վ ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Լ Ն

Ես ուզում եմ նստել: Դու գրեցիր քո դասը: Իմ
պապը մեռավ: Այսօր թաղեցինք նորան: Եթէ ուզում
ես սովորել, միշտ կարդայ: Իմ հայրը մի ծառա վար-
ձէց: Նոքա ջնջեցին մեր գրածները: Իմ քոյրերը գուլ-
պա են գործում: Աղուէսը մտաւ հալաբուռը և հավե-
րին խեղդատեց: Մէկ ժամուս մէջ տետրակներս տողեցի:
Քեղեցիկ առավօտ է: Քոյրս աննախց մէկ նամակ ստա-
ցավ:—Եղբայրս ինչ մէկ արծաթէ գրիչ ընծայեց:

Ուղագրութիւն. — Արծաթէ, ոսկէ, կիւրակէ, ըոպէ...

9.

Դ Ռ Ն Ա Պ Ա Ն

Ամէն մարդ դռնապան է:

Դու էլ դռնապան ես. զիտե՞ս:

Շատ կարելի է, դու ասես թէ՛ ես դռնապան չեմ:

Իայց ես կ'ասեմ որ դու էլ դռնապան ես:

Մի մեծ թագաւոր կայ:

Այն թագաւորը քեզ դռնապան է կարգել: Գոյս Դու պէտք է պահպանես մի գեղեցիկ դուռ: Երբ այն դուռը բաց է լինում, մի գեղեցիկ պալատ է երևում:

Այդ պալատի մէջ թանկագին ոսկորներ են երևում:

Այդ ոսկորները կարգով են շարուած:

Մեծ թագաւորը քեզ դռնապան է կարգել, որ դու չթողնես որ այդ դռնովը անարժան բաններս մտնի: Աւելի պէտք է գգուշանաս, որ այդ դռնից անպէտք բաներ դուրս չգան:

Որովհետեւ, ինչ որ այդ դռնիցը դուրս է գալիս, այն քեզ մեծ վնաս է տալիս:

Մեծ թագաւորն էլ շատ է ատում: այդպիսի բաները: Ես քեզ պէտք է ասեմ, որ քեզ դռնապան կարգող մեծ թագաւորը Աստուած է: Իսկ դու կարող ես ինչ ասել, թէ դուռը որն է:

ՀԱՆՆԼՈՒԿՆԵՐ—8. Տնից դուրս եմ գնում, Ետեիցս գալիս է:

9.—Ասում եմ «Արի, արի», չէ գալիս:

Ասում եմ «Մի գայ, մի գայ»,—գալիս է:

10.—Մի թաշկինակ ունեմ. ինչքան չորացնում եմ, չէ չորանում:

Վ ա Ր Ժ ո Ւ Թ Ի Լ Ն

(Դրեցէք Հակառակ ձևով:)

Ես գրում եմ իմ դասը: Դու գնում ես ուսումնարան: Նա կարում է իւր տետրակը: Մենք այսօր

գիւղ ենք գնում: Դուք լաւ էք կարգում: Նորա Հաց են թխում:

Ես մեր տանը խաղում էի: Դու ծառի տակը նըստած էիր: Տիգրանը իրանց պարտիզումը քնած էր: Մենք Հագնում էինք մեր կոշիկները: Դուք կանչում էիք իմ ընկերներին: Նորա էլ գալիս էին ձեզ մօտ:

Վաղը նա կը գայ մեր տուն: Յետոյ դու նորան կը տանես իմ եղբօր մօտ: Ես էլ ձեզ կը սպասեմ այնտեղ:—Ձեր որդիքը եզները կը լծեն: Դուք գետինը կը վարէք: Մենք էլ ցորենը կը ցանենք:

Վ ա Ր Ժ ո Ւ Թ Ի Լ Ն

Մուրացկանը եկաւ դուռը բաղխէց: Մայրս նորան մի գաթա տուէց: Տարուա առաջին օրը ինչ է: Իմ անունը ովսաննայ է: Բաղտավոր է այն երեխան որ լավ ծնողներ ունի: Քոյրս գրէլ գիտէ: Այն երեխաի ատամները թափուէցան: Բերանդ բաց արայ, ատամներդ տեսնեմ:—Ո՞րդի, դասդ կարդայ:

Ուղագրութիւն.—Որդի, ոսկի, ոտք...:

Ես գրում եմ, կը գրեմ. դու գրում ես, կը գրես:

Մենք գրում ենք, կը գրենք. նորա գրում են, կը գրեն:

10

ԵՐԿՈՒ ԵՒ ՄԵԿ

Ահանջդ երկու ունես մի բերան, Հասկացիք դու լաւ:

Աշխարհիս վերայ կը լրսես շատ բան, և խօսիր սակաւ:

Աչքերդ երկու. ունես մի բերան, և մի շարժանք. և չասկայցիր դու լաւ.

Աշխարհիս վերայ կը տեսնես շատ բան, և պատմիր սակաւ:

Երկու ձեռք և մի բերան դու ունես, և չասկայցիր դու լաւ.

Ամբողջ օրը դու պէտք է աշխատես, և ուտես սակաւ:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ.— 11. Կիսատ կոնք՝ պատից կախած:

12. Մէկը մէկէլի վերայ,

Վեցի կէսը կը դառնայ:

Սխալ.— Անկաջ, գոնքաջ, կարմունջ.

Ուղիղ.— Ականջ, գոքանջ, կամուրջ.

Կաթ և ջուր

(Համեմատութիւն)

Նմանութիւն.— Կաթն էլ ջուրն էլ ծարաւը կտորուծ են: Կաթն էլ, ջուրն էլ թափուող առարկաներ են, հեղուկ են: Կաթն էլ, ջուրն էլ աղտոտ ամանում փչանում են: Ո՛չ կաթը, ո՛չ ջուրը մետաղէ ամանում չպէտք է պահել: Թէ՛ կաթը, թէ՛ ջուրը սառը տեղը լաւ են պահուած: Իսկ տաք տեղը փչանում են: Թէ՛ կաթնով ու թէ՛ ջրով հաց թխելու համար խմոր են հունցում:

Չանագանութիւն.— Կաթնի մէջը չաղութիւն կայ. իսկ ջրի մէջը չկայ: Չուրը թափանցիկ է. իսկ կաթը անթափանցիկ է: Չուրը անդոյն է. իսկ կաթը սպիտակ է: Կաթը թթուում է. իսկ ջուրը չէ թթուում: Կաթը աւելի սննդարար է քան թէ ջուրը: Լաւ ջուրը ո՛չ համ ունի, ո՛չ հոտ. իսկ կաթը այնպէս չէ: Ծծկեր երեխան մէնակ կաթնով կարող է կերակրուիլ. իսկ մէնակ ջրով չէ կարող: Չուրը լինում է շոր ու փափուկ. իսկ կաթը՝ թանձր ու նոսր: Կաթնի մէջը ջուր կայ. ջրի մէջը կաթ չկայ: Ո՛չ մի բոյս անջուր չէ կարող աճիլ. իսկ անկաթ կարող է: Չուրը ստանում ենք գետից ու աղբիւրից. իսկ կաթը խոտակեր կենդանիներից: Փչացած ջուրը չէ խմուած. իսկ թթուած կաթնից մածուն են շինում:

Նշանակում է կաթն ու ջուրը միմեանց քիչ են նման. նոցա մէջը նմանութիւն քիչ կայ. բայց Չանագանութիւն շատ կայ:

Ծան.— Այսպէս կարելի է համեմատել միմեանց հետ շատ միատեսակ առարկաներ:

Վարժութիւն

Այս սեղանների վերա վօջինչ չկա: Ես լավ գիտեմ իմ դասերը: Քոյրս գրէց իւր նամակները: Ես աշխատում էմ սովորել այն ամէն բաները, ինչ վօր հարկաւոր է մարդու: Նոքա կը գրեն ձեր երգերը: Քոյրս արտադրեց պրծավ. բայց ես դեռ պէտք է արտադրեմ: Երեկ մենք հաց թխեցինք. վաղը նոքա կը թխեն: Ես չկարողացա մէկ վօսկի ճարել: Ես չեմ մոռտնա ինչ վօր սովորեցի այս մի քանի ամսուա մէջ:— Լուսինը երևեցավ: Հիւանդը լավ է:

Ուղղա գրութիւն. — Երկի, սեանալ, տերև. —
Հիւանդ, հաշիւ, հազիւ. —

Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, իննը, տասը. — տասնումէկ, տասերկու, տասերեք...
— քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, իննսուն, հարիւր, հազար:

Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ:

11.

ՄԵՂՔԻ ԹՈՂՈՒԹԻՒՆ

Աշտը մի տաս տարեկան տղայ էր:
Մէկ օր նա ուսումնարանից գնում էր տուն:
Ճանապարհին մտաւ մի եկեղեցի:

Նա քահանային ասաց.
— Տէր հայր, խնդրեմ ինձ խոստովանէք. վաղը ուզում եմ ճաշակուել:

Քահանան խոստովանեց և վերջը հարցրեց.
— Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես արել:

Աշտը պատասխան տուեց.
— Տէր հայր, ես մի այնպիսի մեծ մեղք եմ արել, որ չեմ կարող ձեզ ասել:

Ասաց և աչքերը արտասուքով լցուեցան:
— Պալուսակիր մէջ քարետախտակ ունենա, հարցրեց քահանան:
Աշտը հանեց քարետախտակը:

Քահանան ասաց.
— Եթէ դու չես կարողանում ասել մեղքդ, վեր աքաբրեգրիչը և գրիւր քարետախտակիդ վերայ ինչ որ արել ես:

Աշտը գրեց մի քանի խօսք:
Բայց իսկոյն նորա աչքերից արտասուքներ թափուեցան:

Եւ գրածը ջնջուեցաւ:
— Բաւական է, ասաց քահանան. տեսնում ես, որդեակ, ահա քո արտասուքը ջնջեց քո մեղքը:

Ուղիք է:

Զրմեռ էր, տրդերք եղան հալ ու մաշ,
Գնացին դաշտ, տեսան բըսած լաւաշ,
Տափը ծաղկալից, օրը տաք, խեղդուկ,
Ծառերից կախ կախ սեխ, բողկ, ձմերուկ:

Բարակ ճիւղի վրայ արջը շինեց բոյն,
Մէջը ձու ածեց, թխսել էր ուզում.
Ղըռղըռան ազուաւը նոյն ծառի տակին
Ծիծ էր տալիս իւր գեղեցիկ ձագին:

Վարժ ու թիւն
(Գրեցէք, ինչպէս պէտք է:)

Ես հաց եմ ուտում: Գու ջուր խմել: Նա ծառ տնկել: Մենք դաս սովորել: Գուք գիրք կարգալ: Նոքա տանձ ուտել: —

ես տուն էի շինում: Նա պտուղ քաղել: Դու վայր ընկնիլ: Նոքա բաց անել: Մենք հասց թխել: Ա արժ ու թխելն

Մի մարդ տեսավ մէկ երեխա: Այն մարդը հարցրէց այն երեխան. «Դու կարդալ գիտէս»: Այն երեխան պատասխան ատւեց այն մարդուն: «Այո՛, իմ եղբայր գէորգը գիտե»: «Ուղղա՛ք»—«Ի՛նչ».— Եղբայր, բոյր.— հայր, մայր. լոյս, յոյս.—

* * *
12.

ԹՈՒՉՈՒՆԻ—ԲՈՅՆ

Մէկ ծխանի վերայ մի թռչունի—բոյն կար: Այս բոյնի մէջը չորս հատ թռչնիկ կար: Փոքրիկ հաւկիթները ծակուել էին: Եւ նոցա միջից դուրս էին եկել չորս հատ անփետուր թռչնիկ: Իսկ նոցա մայրը փետուրներ ունէր: Նա թռչնիկներին տաքայնում էր իւր թւերի տակը: Հայրն էլ գնում էր կերակուր բերելու: Երբ թռչնիկները մեծացան, նոցա փետուրները աճեցին: Մայրն էլ դուրս գնաց հօրն օգնելու: Նոքա միասին էին կերակուր ձարում: Բայց թռչնիկների թւերը գեռ փոքր էին: Նոքա չէին կարողանում թռչել:

Այս պատճառով մայրը նոցա մօտ ճիվ, ճիվ, ճիվ արեց:

Այս ձայնով նա ուզում էր ասել. —Ի՛մ զաւակներ, իմ փոքրիկ սիրեկաններ, տնից դուրս չգա՛ք. այսինքն ձեր բոյնից մի՛ք հեռանալ: Բայց, երբ մայրը թուա գնաց, թռչնիկների մէկը չհնազանդեց: Նա ուզեց դուրս գնալ բոյնից: Եւ մինչև ծխանի բերանը հասաւ: Ախ, անմիտ թռչնիկ, հիմա պէտք է վայր ընկնի, ... վայ, ահա ընկնում է...

Եւ ծխանի մէջ ընկաւ: Երբ հայրն ու մայրը լետ դարձան, տեսան որ բոյնի մէջ միայն երեք հատ թռչնիկ կայ: Այս երեք թռչնիկները սկսեցին ծրվծրվալ: Նոքա ուզում էին ասել. —Մեր եղբայրը կորաւ, ծխանի մէջ գորոււեցաւ: Այն ժամանակ հայրը, մայրը և երեք թռչնիկները շատ ու շատ ցաւեցան: Որովհետև, երբ մէկը անհնազանդ է լինում, ամբողջ ընտանիքն էլ անբաղտ է դառնում:

ԱՌԱՅՆԵՐ.— Ասողին էլ լսող պէտք է: — Իմացողին մէկ՝ չիմացողին հազար: — ՀԱՆԵԼՈՒԿ. 11— Այն ինչ տակառ է անձեռագործ. Մէջը երկու տեսակ խմիչք կայ:

լու, նա էլ իւր հետ ճրագ չէ տանում:

Այն ժամանակ, ախ, այն տխուր ժամանակը մահը ծածկում է նորա փեղկերը:

Եւ աւնդ, լուսամուտները կտրատուում են և ապա- կիները փշրուում են:

ՀԱՆՏԻՈՒԿՆԵՐ.— 14. Փոքրիկ լուսամուտ՝ կրակով լի.—

15. Սև սալ ա, ս ղզգայքս քլմ

Սպիտակ սալ ա.

Միջինը կը շողշողայ:

16. Թողորակ պարտէզ

Երկգրունի.

Յանկ իւր փըշաղէզ,

Զուրն աղի:

17. Մէկը կանգնած խօսում է:

Երկուսը ահանջ են դնում.

Երկուսն էլ նայում են:

Ես մէկ գրիչ գտայ:

Մէկ գրեցի. մէկ ջնջեցի:

Վ ա թ ու թ իւ ն

(Գրեցէք շատ ի ձեռով):

Մէկ դերձակ ուրիշի համար շոր կարելիս միշտ կտորիցը գողանում էր: Մի գիշեր նա երազ տեսաւ: Տեսաւ որ իւր գողացած բոլոր կտորները կա-

խուած էին մի ծառի ճիւղից: Նա վախեցաւ. զարթեց և երազը պատմեց իւր աշակերտին: Յետոյ նորան ասաց. «Երբ տեսնես որ ես մի կտորից ուզում եմ գողանալ, այն ծառը միտքս բեր»:—

Մի անգամ մէկ շոր ձևելիս դերձակը ուղղում էր միքիչ իւր համար վերցնել: «Մտաք մեմ բերում այն ծառը»: «Դերձակը ասաց. «Անպիտան, այն ծառի վերայ հօնա կտորից չկար»: Ասաց ու մի կտոր վեր առաւ իւր համար:

Վ ա թ ու թ իւ ն ա ս գ ու մ զ ո ս ո յ ի

Ես դուռը կբացանեմ: Այս շորը թաց արայ: Ես կը թափտամ քո վերարկուն: Իմ եղբայրը կանցկենա՛ւ քերտան կողմը: Ես կվերանեմ քեր գրքերը: Զգուիշ կաց որ չվայրընկնես: Արի գնանք մանգանք: Գնայ՝ Բազրատի յետ խաղարայ: Յետոյ վերաւ գիրքը և կարդայ:

* *

14.

ԻՆՉ ՈՐ ԱՆՏՍ՝ ՔԵՉ ԿԱՆՏՍ:

Մի մուրացկան միշտ ասում էր. — Ի՛նչ որ անես՝ քեզ կ'անես: Այդ ասում էր և ողորմութիւն էր խնդրում: Մի օր էլ նա գնաց մի դուռ բաղխեց և ասաց.

— Ծան տիկին, ինչոր անես՝ քեզ կ'անես. մի բան
 տուր ինձ: Այն կինը նորան մի գաթայ տուեց:
 Նա էլ ասաց. «Ինչոր անես՝ քեզ կ'անես»: Ասաց
 և գնաց: Բայց նա գաթան շատ սիրեց:
 Ամէն օր գալիս էր և բան էր ուզում:
 Խեղճ կինը ձանձրացաւ մուրացկանի գնալ գալուց:
 Նորա ամուսինն ու որդին ուրիշ աշխարհ էին
 գնացել:
 Այս պատճառով ամէն անգամ ողորմութիւն էր տա-
 լիս, որ նոքա առողջ վերադառնան:
 Վերջապէս նա ուզեց մուրացկանից ազատուել:
 Մէկ օր երբ նա գաթայ էր թխում, գաթայի մէջը
 թոյն դրեց, որ մուրացկանը ուտէ ու մեռնի:
 Միւս օրը մուրացկանը եկաւ, դուռը բաղխեց:
 — Ծան տիկին, ասաց նա, ինչ որ անես՝ քեզ կ'ա-
 նես. մի բան տուր ինձ: Կինը տուեց նորան թունաւորուած գաթան:
 Նա էլ դրեց իւր գրպանը և գնաց:
 Մուրացկանի բնակարանը քաղաքից դուրսն էր:
 Երբ նա մօտեցաւ իւր տանը, երկու ճանապարհ-
 հորդ գնացին նորա մօտ:
 Այդ ճանապարհորդները շատ քաղցած էին:
 Եկան, մուրացկանից քիչ հաց ուզեցին:
 Նա էլ տուեց գաթան:
 Նոքա իսկոյն կերան և գնացին դէպի իրանց տունը:
 Բայց մինչև ատու հասան, մահուան դուռը հասան:
 Բարեկամները հաւաքուեցան և հարցնում էին.
 — Ի՞նչ է պատահել ձեզ. վաղուց է որ հիւանդ էք:

Նոքա պատասխան տուին.
 — Ո՛չ. մենք ամենևին հիւանդ չենք եղել:
 Բայց երբ քաղաք մտանք, շատ քաղցած էինք:
 Մի մուրացկանից հաց ուզեցինք:
 Նա էլ մի գաթայ տուեց. կերանք ու այսպէս ե-
 շանք:
 Այս ասացին ու մեռան:
 Կինը, երբ այս լսեց, ձեռքերը գլխին խփեց, և
 սկսեց լաց լինել:
 Նա զիտէր որ իւր ամուսնի և որդու մահուան
 պատճառը իւր տուած գաթան էր:
 Երրորդ օրը եկաւ մուրացկանը:
 Նա իմացաւ որ ճանապարհորդները իւր տուած
 գաթայից են մեռել. և ասաց կնոջը.
 — Հապա ես ամէն օր քեզ չէ՞ի ասում թէ «Ինչոր
 անես՝ քեզ կ'անես». էլի ասում եմ՝ քեզ կ'անես:
 ԱՍԱՅՈՒԱԾ.— Թէ ուրիշին փոս կը փորես,
 Նայի՛ր, որ շատ չը խորես.
 Որ, երբ դու մէջը զլորուես,
 Ողջ մընաս, ողջ դուրս ելնես:
 ԽՕՍՔԻ ՁԵԻ.— Մահուան դուռը հասնել.
 Ուզի՞ր է:
 Իմ կնոջ հայրը իմ գոքանչն է: Իմ աները իմ կնոջ
 եղբայրն է: Ես իմ քենու տազըն եմ: Իմ տալոջ որդին
 իմ սկեսրայրի թոռն է: Իմ սկեսուրը իմ սկեսրայրի
 քոյրն է: Իմ քենակալի կինը իմ հարսն է: Իմ աներոջ

կինը իմ գոքանչի քույրն է: Ես իմ կնքահօր որդին եմ: Ես իմ սանի սանահայրն եմ: —

Վարժողութիւն

Մի պառավ իւր հավերը համարելիս ասում էր. «Զուիք, զօյիք, զուլք, զօյք. հաւերիս թիվը լրացած է»: Մեկ մարդ աիդ բանը նկատեց և մի գուհիքը գողացավ: Պառավը երեկոյին համրում էր և ասում. «Զուլք, զուիք, զօյիք. հավերիս թիվը լրացած է»: Միուս անգամ գողացան երէք հավ: Պառավը կրկին համարեց. «Զօյք, զօյք, մեկ հատ: Վայ. հավերիս մեկը կորել է»:

15.

ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա հասաւ նոր տարի, Մանրը տղայք, չմոռանաք. Հետը բերեց նոր բարի — Աշխարհումըս չէք մէնակ. Մանրը տրդոց՝ ուրախ օր, Ուրիշ շատ խեղճ տղայք կան. Բարի զաւակ՝ հօրն ու մօր: Աղքատ և ան օգնական:

Մանրը տրդայք են ուրախ, Նոքա հայր ու մայր չունեն. Ունեն կաղին, գողինաղ, Սև, չօր հացի կարօտ են. Սալորի չիր, չամիչ, թուզ, «Աղքատներին ողորմած Փրշատ, խրնձոր և բնկուզ: «Եղէ՛ք» կ'ատէ ձեզ Աստուած: միջոց ջոյաւ և ի մի միջոցս ասմզ. նմ սմ: Ի միջոցր միջոցս մի Սի ալ. — Մանր, ծանդր, սանդր, ջոյսմ մ Ուղիղ. — Մանր, ծանր, սանր.

Տօներ. — Զրօրհնէք, Տեառն-ընդ-առաջ, Ս. Գրիգոր Լուսաւորչի (տօն), ս. Վարդանանց (տօն), ծաղկազարդ, զատիկ, համբարձում, հոգեգալուստ, վարդափառ: —

Տարուայեղանակներ.

- Պարուն. — Մարտ, ապրիլ, մայիս.
- Սմառ. — Յունիս, յուլիս, օգոստոս.
- Աշուն. — Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր.
- Զմեռ. — Իեկտեմբեր, յունուար, փետրուար:

Կարգով դասաւորեցէ՛ք:

Մերունի, եկեղեցի, յունուար, կատու, երիտասարդ, հիւրանոց, դեկտեմբեր, արջ, գարուն, քահանայ, ճրնճ-ղուկ, սկեսուր, նապաստակ, գոքանչ, սարկաւազ, հայր, կաթսայ, բոպէ, գրիչ, զատիկ, երեխայ, ուսումնարան, հաւ, որդի, սև, երկաթ, շուն, տուն, շիշ, տարի, ջուր, վարդապետ, խանութ, ոչխար, պառաւ, աղաւնի, ոսկի, գեղարքունի, վերարկու, ամիս, փեսայ, սեղան, եղբայր, ջրօրհնէք, ամառ, սպիտակ, կաւիճ, ձի, արծաթ, ծիծեռնակ:

Վարժողութիւն

(Վերջակէտ դրէք, ինչ տեղ հարկաւոր է:) Ես կարդում եմ իմ դասը իմ եղբայրը խաղում է այսօր քույրս զնաց ուսումնարան ես ու եղբայրս պէտք է գիւղ գնանք կատուն մի ծիտ է բռնել շունը հաջում

է ես սովորել եմ իմ դասը ո՛վ կը խաղայ, նա կը կա-
ղայ այսօր պէտք է անձրև գայ անցեալ ձմեռ շատ ցուրտ
էր մեր ցորենը հասունացել է գիւղացին գետինը վա-
րում է ծիծեռնակը ձմեռը գնում է տաք երկիրներ աշ-
խատեցէք որ ուղիղ գնէք վերջակէտները տեսնենք ինչ-
պէս կը պատրաստէք այս դասը.

ՀԱՆԵԼՈՒԿ. 18.—Մէկ մեծ տաճար կայ, 12 սիւ-
նով, 30 պատկերով. 2 սև ու սպիտակ թռչուն նորա
չորս կողմը թռչում եմ:

*
* *

16.

ԳԻՐՔ

Մի փոքրիկ տղայ կար. անունը Ջարեհ էր:

Հինգ տարեկան էր Ջարեհը:

Նա շատ անգամ նստում էր իւր մօր կողքին և
ասում էր.

—Մայրիկ, խնդրում եմ, մի բան պատմիր ինձ:

Մայրն էլ շատ լաւ լաւ բաներ էր պատմում նո-
րան:

Մէկ օր մայրը Մեծ Ներսեսի պատմութիւնը ա-
սաց:

Ասաց որ այս մարդը շատ ուսումնարաններ բաց
արեց, փոքրիկ երեխաների գրել կարգաւ սովորեցրեց,
որբանոցներ շինեց...:

Երբ մայրը խօսքը վերջացրեց, Ջարեհը հարցրեց.

—Մայրիկ, դու ճանաչում ես Մեծ Ներսեսին:

—Ո՛չ, որդեակս, չեմ ճանաչում, պատասխանեց
մայրը:

—Ուրեմն ինչտեղից գիտես նորա արած գործերը,
ասաց երեխան:

—Մէկ գրքի մէջ կարգացի, պատասխանեց մայրը:

Մէկ օր էլ մայրը Արամի մասին պատմեց:

Պատմեց թէ ինչ ազնիւ ու քաջ մարդ էր, ինչպէս
օտար ազգերին էլ հրամայում էր, որ հայերէն խօսեն:

Ջարեհը մօրը հարցրեց,

—Մայրիկ, Արամին տես՞ել ես:

Մայրը պատասխանեց.

—Ո՛չ, որդեակս, չեմ տեսել. Արամը շատ տարի
առաջ է մեռել:

—Ուրեմն ինչպէս իմացար նորա արածները, հար-
ցրեց երեխան:

—Մէկ գրքի մէջ կարգացի, պատասխանեց մայրը:

Մէկ օր Ջարեհի մայրը տնից դուրս էր գնացել:

Ջարեհը մէնակ էր մնացել, սիրտը նեղանում էր:

Այն ժամանակ ինքն իրան ասաց.

Մայրիկիս պատմածները գրքի մէջ են. ես էլ կա-
րող եմ փնտռել ու գտնել:

Իսկոյն մի գիրք վեր առաւ սեղանի վերայից և բաց
արեց...:

Բայց միայն սև նշաններ տեսաւ սպիտակ թղթի
վերայ:

Նա գիրքը ծածկեց և մէկ ուրիշ երես բաց արեց:

Կրկին սպիտակ թուղթ տեսաւ, վերան սև սև
գծեր:

Գրքի երեսները շուր ու մուր տուեց:

Բայց ամէն տեղ միևնույն նշանները տեսաւ:

Ջարեհը ոչինչ չէր հասկանում:

Այն ժամանակ գիրքը սեղանի վերայ դրեց ու ինքը քնեց:

Երբ մայրը տուն գնաց, Ջարեհը զարթեց և հարցրեց:

—Մայրիկ, ի՞նչ պէտք է անեմ որ գրքի մէջ եղած պատմութիւնները հասկանամ:

—Հոգեակս, պատասխանեց մայրը, պէտք է կարգալ սովորես:

ՍՍԱՅՈՒԱԾ.—Գիրքը մի ծառ՝ վերան կեռաս,

երբ ձեռքըդ առնես կարգաս,

Միայն տերևը չը շուր տաս,

Նայէ՛ պըտղի համը տեսնաս:

Ու զի՞ղ է:

Ես մի բաժակ թէյ կերայ: Քոյրս մէկ աման սպաս հագաւ: Եղբայրս մի թաս փլաւ խմեց: Այս սեղանի գոյնը եռանկիւնի է: Այդ խնձորի ձևը կարմիր է: Վերարկուն քաղցր խմելիք է: Այս դարնանը՝ նույնքեր ամսին շատ ձիւն եկաւ: Փետրուարի 30-ին շատ լաւ եղանակ էր: Մայիսը ձմեռուայ ամենալաւ ամիսն է:

Ուտելիքների մէջ կաթը ես շատ եմ սիրում: Տանձենին շատ գեղեցիկ թուփ է: Տակառը վայր ընկաւ կոտրուեցաւ: Կուժը վայր ընկաւ, ջարդուեցաւ: Մեր գինու շիշը ժանգոտուել է: Ձեր կաթսան վայր ընկաւ, փշրուուեցաւ: Նոր տարի օրը երեխաները կարծիր հաւկիթներ են կոտրատում: Ձատկին ջուրը օրհնում են:

Համբարձման օրը եկեղեցուժը ուռն են բաժանում: Այս տարի նոր տարին փետրուարի 10-ին կը լինի: Իսկ ջրօրհանէքը սեպտեմբերի 20-ին կը լինի: Վարդենին շատ քարձը ծառ է: Փեթակը մարդկային բնակարան է:

Վարժ ու թիւն

(Վերջապէտ գրէք, ինչ տեղ հարկաւոր է:)

Մեր ծառերը կանաչել են այսօր ես լաւ գիտեմ դաս հաց ու պանիր՝ կեր ու բանիր հայրդ քեզ կանչում է դուք քանի՞ օրդի ունէք ես երկու օրդի ունեմ Մարիամը արտագրում է իւր դասը ինչ ցուրտ եղանակ է այսօր կատուն ծիտ է բռնել եղբայրս ուսումնարանից տուն եկաւ ձեր քոյրը շատ լաւ է երգում Գարեգին, կօշիկներս մաքրիր այսօր ամսի քանինն է մեր դասը սրն է լաւ մտածեցէք և Կետոյ գրէք վերջակետները... —

* *

17.

ՄԻՍԵՌ ԵՒ ԳՂՈՒԿ

Գլուկը Սիսեռին նայեց և ասաց.

—Քոյրիկ, այդ ի՞նչպէս նման ես ինձ:

Բայց չեմ կարծում որ մեր ցեղից լինես. որովհետեւ ինձ պէս կոկ ու կլոր չես:

Սիսեռը պատասխանեց.

Ձեր ցեղիցն եմ. միայն այն պատճառով կոկ ու

կլոր չեմ, որ ես դեռ մարդու ձեռք չեմ ընկել:
Աստուած մի արասցէ, որ ես թաւան մտնեմ, խա-
շուեմ ու մրրկուեմ, յետոյ քեզ պէս իմ ազգը չըճա-
նաչեմ:

Աւելի լաւ է, որ գետինը մտնեմ, քան թէ քեզ
պէս երևելի դառնամ ու ազգս չճանաչեմ:

Մննս բարով. ես գնում եմ:

Զիհնի թէ քո տէրը գայ, ինձ տեսնէ ու թաւալի
մէջ տանջէ չարաչար:

Ես ազատ եմ. քեզ պէս ծառայ չեմ. մննս բարով:

Գլուկը նորան ասաց.

—Մի շտապիր, սպասի՛ր, ցած գամ, որ ես էլ
հետդ գամ, քոյրիկ:

Ինչո՞ւ ես ինձ այստեղ մէնակ թողնում:

Գլուկը իջաւ և Սիսեռի հետ գնաց արտը. բայց
ի՛նչ եղաւ:

Գլուկը այնտեղ մնաց անպէտք:

Իսկ Սիսեռը ծլեց, ծաղկեց. որովհետեւ դեռ այն-
պէս անարատ էր, ինչպէս Աստուած նորան ստեղծել էր:

Ձե՞զ եմ ասում, բոլոր Հայեր,

Մատնող գնամ արևուն ձեր.

Բնական ճանքից մի՛ք շեղուի՛, մի՛,

Որ պրտուղ տաք Հայրենիքի:

ԱՍՍՅՈՒԾ.—Ընկույզը ելաւ իւր կրճեպից,

Կրճեպին չէ հաւանում.

Ձաւակը ելաւ հօր վիճակից,

Հօրն ու մօրը չէ հաւանում:

ՀՍՆԵԼՈՒԿ. 19—Մէկ տուն աղջիկ.

Ամէնքի քթերն էլ ծուռն են:

Չ որս եղբարք

Առաջինն է պատանի,

Բողբոջ, տերև, սաղարթ ունի.

Պայծառ արև, կանաչ արօտ,

Որոնց տրղալք են միշտ կարօտ:

Երկրորդ եղբայրը երիտասարդ.

Տալիս է մեզ անձրև առատ.

Ծաղկունք ցանում է ամէն դի,

Յոյս է տալիս առատ հնձի:

Երրորդ եղբայրն այր չափահաս,

Մրգերով լի ունի մի թաս.

Բաժանում է տրղոց իւր գանձ՝

Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ:

Չորրորդ եղբայրն է ծերունի,

Յուրտ ու խաւար շալկած ունի.

Այգի, անտառ, ամալացրեց,

Դաշտ և արօտ ձիւնով ծածկեց:

Ո՞րն է այդ եղբայրները:

Ս ի ս ա լ.—Նընգուզ, նընտրել, նընկեր.

Ու զ ի ղ.—Ընկույզ, ընտրել, ընկեր.

Վ ա Ր Ժ ու թ ի ւ ն

Քահանաի մօտ խոստովանում էր մի փոքր աղջիկ:

Քահանան նորան հարցրեց. «Վորդի, ի՞նչ ես արել»:

Աղջիկը սլատասխանեց.

—Տէրաէր ջան, լինդ ջուխտ զուլպա, երկու պա-

ճիճ և մէկ թաթպան:

— Չէ, չէ. ուրիշ ասոյ, ի՞նչ ես արել, հարցրեց քահանան:

— Տէրաէր ջան. մի ջուխտ էլ զախթան էմ գործել, ասաց աղջիկը:

— Է՛հ, հէր օրհնած, ասում էմ՝ ի՞նչ մեղք էս արել, ասաց քահանան:

— Մե՛ղք, կրկնեց անմեղ աղջիկը, մեղքը ի՞նչ բան է: ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ. 20. — Մէկ սաւան ունեմ. ողջ աշխարհը ծածկում է. միայն ծովը չէ ծածկում:

21. — Ելայ լեռը, քաշեցի բեռը. թափեցի մանր սիսեռը:

22. — Էն ի՞նչ վարդ է, որ ձմեռը բացուում է. ժամանակը լրանում՝ թառամում է:

* * *

18.

ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԵՒ ԳԻՆԻ

Մէկ մարդ հրաւերք ունէր:

Նա դահլիճումը սեղան էր բաց արել:

Սեղանի վերայ ամէն տեսակ կերակուր կար:

Տանտէրը հիւրերի հետ խօսում էր մի սենեակում:

Կերակուրներն էլ դահլիճումը սկսեցին խօսել և վիճել:

Թան էս պասը զուրս պրծաւ ու այսպէս ասաց.

— Բարեկամներ, ես ձեր մէջը ամէնից լաւն եմ. որովհետեւ շատ ախորժելի համ ունեմ:

Ա. զը միւս ծայրիցն ասաց.

— Պարոն, ի՞նչ մեծ մեծ ես բրդում. ես ամէնիցդ համով եմ:

Ամէնից համ եմ տալիս. առանց ինձ ո՛վ կ'ուտէ ձեզ:

Հը ու շա կը խօսեց.

— Ներողութիւն. ինձ ամենեւին համ չես տալիս:

Պ զ պ ե ղը չըիմացաւ ու ասաց.

— Լռեցէ՛ք, լռեցէ՛ք, ձեր մէջ պատուով մեծը ես եմ. չէ՞ որ ի՞նչ են ցանուած ձեզ վերայ:

— Ինձ վերայ չէ՛, վրայ բերեց Մ ա ծ ու Ն ը:

Սոցա վէճը լսեց Գիւնին և քթի տակը ծիծաղեց ու ասաց.

— Զարմանում եմ ձեզ վերայ, որ այդպէս հպարտ հպարտ խօսում էք:

Գուք սովքեր էք. ի՞նչ նայեցէ՛ք:

Տեսէ՛ք, ես աշխարհի սիրելին եմ. բայց ամէնից կիսի չափ էլ չեմ պարծենում:

Մ'վ ինձ խմում է, միշտ այս է ասում. «Կեցցես գինի. իմ սրտի վարդն ես, իմ փորի զարդն ես»:

Այս խօսքերի վերայ իսկոյն բոլոր կերակուրները ծափահարեցին ու լուռ կացան:

ՀԱՆՆԵԼՈՒԿ. 23. — Անծակ յուլունք, անուոր դերձան. Աստուած շարում է, մարդը քանդում է:

ԽՕՄԲԻ ՁԵԻ. — Մեծ մեծ բրդել.

Վ ա ղ ժ ու լ թ ի ւ ն

ա—1	լ—30	կ—60	դ—90
ժ—10	խ—40	հ—70	ճ—100
ի—20	ծ—50	ձ—80	ռ—1000

Գրեցէ՛ք տառերով.—14, 25, 36, 47, 58, 69, 71, 82, 93, 105, 113, 236, 460... Այդ թուերը գրեցէ՛ք բառերով:—

Գրեցէ՛ք թուերով.—խդ, կե, ձթ, ժա, ճժչ, միգ, յբ, ն, շԼԴ...:

*
**

19.

ԱՍԵՂՆԵՐԻ ԳԵՏԸ

Մի պառաւ կար, Մարիամ անունով:

Մարիամը ունէր մի տղայ, Գալիանէ անունով և մի աղջիկ Գալիանէ անունով:

Մէկ անգամ Մարիամը լուսամուտի մօտ նստել էր և կտրկատում էր Գարեգնի շապիկը:

Գալիանէն էլ յատակի վերայ նստել էր և փայտի կտորներից տնակ էր շինում:

Մայրը ասաց.

—Այնտեղ արի՛, Գալիանէ՛. արի՛ ասեղս անց կացրո՛ւ:

Գալիանէն գնաց մօտը. միայն աչքերը չէր հեռացնում իւր տնակից:

—Իրան՞ որ ես հիմա լաւ չեմ տեսնում, ասաց մայրը. և այս շապիկը պէտք է կտրկատեմ:

Այս պատճառով քո աչքերը փոխ եմ ուզում ինձ համար:

Գալիանէն ասեղն առաւ ու դերձանը անց կացրեց:

Յետոյ ասաց.

—Զգո՛ւյ՛ կաց որ դերձանդ էլ դուրս չ'ընկնի:

Ես էլ ժամանակ չունեմ անց կացնելու:

Այս ասաց և կրկին գնաց իւր տնակի մօտ: Բայց նորա ոտքերի շարժումներից տնակը ցնցուցաւ ու փուլ եկաւ:

Գալիանէն էլ չուղեց խաղալ:

Այլ պառկեց բազմոցի վերայ և սկսեց լաց լինել: Փոքր ժամանակից յետոյ նա մէկ ուրիշ գիւղումն էր:

Այնտեղ փողոցի քարերը շատ սուր էին:

Եւ ման գալիս նորա ոտքերն էին մտնում:

Տների դռներում պառաւ կայնայք էին կանգնած:

Ամէնքի կերպարանքն էլ մի տեսակ էր:

Այսինքն ասեղի նման սրածայր քթեր և սուր սուր աչքեր ունէին:

Գալիանէն այն գիւղից հեռացաւ, գնաց մի գետի մօտ:

Այնտեղ կար մի բլուր, որ ձիւնի նման սպիտակ էր:

Մի ձայն Գալիանէին ասաց.

—Աշխատի՛ր, ո՛վ աղջիկ:

Գալիանէն լեռ նայեց և տեսաւ որ գիւղի բոլոր պառաւները գնացել էին իւր ետեւից:

Նոքա նստոտել էին և իրան էին նայում:

Յետոյ այն պառաւներից մէկը Գալիանէին ասաց.

—Աղջիկ, այս գիւղը ուղարկում են այն աղջկերանցը, որոնք չեն ուզում օգնել իրանց մօրը:

Այս գետը բոլորը ասեղ է. և այս ձիւնի նման սպիտակ բլուրը բոլորը դերձան է:

Դու այս բոլոր դերձանը պէտք է անց կացնես այս բոլոր ասեղների մէջ:

Յետոյ ասեղները պէտք է տաս այս պառաւներին, որ երբ ուզենան կարել, ասեղը պատրաստ լինի:

Ուրեմն սկսի՛ր աշխատել:

Յետոյ այն պառաւը շարժեց իւր ձեռքի փայտը Գալիանէի վերայ:

Գալիանէն վախեցաւ. և սկսեց շուտ շուտ ասեղները անց կանցնել:

Բայց ասեղների դետը դեռ ևս առաջուայ պէս լի էր և դերձանի բլուրն էլ առաջուայ չափ բարձր էր:

Գալիանէն յոգնեցաւ ու քաղցեցաւ:

Յետոյ մտաց. —Օհ, ես չեմ կարող այդ բոլոր ասեղները վերջացնել:

Բայց պառաւը կրկին ձեռքի փայտը բարձրացրեց և ուզում էր խփել:

Այս պատճառով Գալիանէն էլի սկսեց աշխատել:

Յետոյ, երբ սաստիկ յոգնեցաւ, թողեց ասեղները և ասաց.

—Է՛լ չեմ կարող անց կանցնել. ինչ ուզում ես՝ արա՛:

Այս ասաց ու շտապով վազեց:

Բայց ոտքը սահեցաւ և ընկաւ ասեղների դետը:

Սորա վերայ զարթեց իմացաւ որ երազ էր:

Նա աչքերը բաց արեց ու տեսաւ որ մայրը դեռ ևս կարում է Գարեղինի շապիկը:

Գալիանէն վազեց նորա մօտ և ասաց.

—Ո՛հ, մայրիկ, մի սարսափելի երազ տեսայ:

Եւ ուզում եմ, որ քանի կենդանի եմ, միշտ քո ասեղները անց կացնեմ:

Վ ա ը ժ ու թ ի ւ ն

Մեկ գիւղացի գնաց բժշկի մօտ վօր նորանից խորհուրդ հարցնէ իւր հիվանդութիան մասին: Բժիշկը քննեց նորա ցավը. գրիչ վեր առավ և գրեց նորա համար մի պատուէր: Թուղթը տուէց նորան և ասաց. «Գործ դիր արիս բանը եզուց առաւօտը, և շուտով կ'առողջանաս»: Գիւղացին կարծում էր թէ արիս թուղթը դեղն է. տուն գնաց և միուս օրը առաւօտը ջրի լետ կուլ տուէց և բոլորովին առողջացավ:

* * *

20.

ՅՈՐԵՆ ԵՒ ԿՈՐԵԿ

Մէկ օր Յորենը ասաւ.

«Ո՛վ կորեկ, մնաս բարեաւ.

Վաղուց ի վեր ունեմ ուխտիկ

Գընալ մի օր ի Բէգէռիջ:

Մընաս բարով,

կը գամ շուտով:—

Քեզ կը բերեմ շատ ընծաներ,

Ոսկէ մատանի և մանեակներ.

Քեզ թողնում եմ իմ պաշտօն,

Խընդրում եմ որ յանձն առնես դուն:

Խընդր կըլտը եղի՛ր հացիկ.

Գաթալ, նազուք և բլիթիկ»:

Կորեկն այս որ լսեց իմացաւ,
Յորենի Հետ Համբուրուեցաւ.

Բայց մի ըոպէ անցած չէր,
Ի՛նչ կը տեսնես. Կորեկն մեր
Վաղելով, Հեալով
Յորենի ետևից,
Մասիսից Արազած,
Արազածից Բասեան.

Վաղեց Հասաւ Բիւրական.
«Յորեն եղբայր, տըւեց ձայն.
Սպասիր, կանգնիր մի փոքրիկ,
Քիչ բան ունեմ ասելիք.
Ինձ ասիր՝ այսպէս, այնպէս եղիր.
Բայց չասիր թէ՛ բարակցիր,
Երկարիր, լաւաչ եղիր:

Չըգիտեմ, արդեօք մոռացար.
Լոջ էլ լինեմ, Յորեն եղբայր»:
— «Ո՛չ. մի՛ երկարիր, մի՛ բարակիր»:
— «Ինչո՞ւ Համար»:
— «Ասում եմ քեզ. իմանում ես.
Կը զղջաս, թէ՛ փորձ փորձես»:
Բայց Կորեկը մարդկանցից
Ստացած մեծ պատուից

Խիստ Հպարտացած՝ մի օր փորձեց

— Լաւաչ դառնալ. սակայն դիտե՛ս.
Ի՛նչ եղաւ. երբ երկարցաւ.
Բարակցաւ ու խեղդուեցաւ.
Փըսոր փըսոր եղաւ.
Խայտառակուեցաւ:

Ա.Ռ.Ա.Ծ. Ամէն Ղազար Ղազար չի լինի.
Ամէն տակուի զազար չի լինի:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ.

24. Բռնեմ ափովքս, 25. Սրով կտրտեցին ինձ,
Շաղ տամ թաթովքս. ևս մեռայ.
Մեռնի տարով, Առաջին տարին
Այլրի բարով: Դուրս եկայ:

* * *

21.

ՈՍԿԷ ՀՅՇԱՓԵ ԼԻՔ

Հին ժամանակը կար մի թագաւոր Միդաս անու-
նով:
Սա աշխարհիս երեսին միայն ոսկին էր սիրում:
Իւր թագը ոսկուց էր շինուած և շատ թանկա-
գին էր:
Միդասը ամենևին չէր սիրում այն բաները, որ
ոսկուց չէին շինուած:

Սա մի մուժ սենեակ էր շինել տուել գետնի տակը. այն սենեակում պահում էր իւր գանձը և ամէն օր մտնում էր այնտեղ ու համարում էր իւր ոսկիները: Ամէն անգամ, երբ դատարկում ու լցնում էր սուկու պարկերը, ասում էր ինքն իրան. «Ո՛հ, որքան երջանիկ եմ ես»:

Ա.

Մէկ օր էլ, երբ այդ մուժ սենեակում նստել համարում էր իւր ոսկիները, յանկարծ մի մարդու ստուերը ընկաւ դիզած ոսկիների վերայ:

Իսկոյն թագաւորը գլուխը բարձրացրեց և ի՛նչ տեսաւ.—մի օտար մարդու դէմք, որ երեւեցաւ նեղ լուսամուտից, արևի պայծառ ճառագայթների մէջ:

Իսկ մի կարմիր դէմքով երիտասարդ էր. այդ օտարականը նաեւ սենեակի չորս կողմը տեսաւ ոսկին ու ոսկեղէն բաները, կրկին նայեց Միդասին և ասաց.

—Ի՞նչ հարուստ մարդ ես, Միդաս բարեկամ. չեմ կարծում որ աշխարհիս երեսին գտնուի մէկ այնպիսի սենեակ, որտեղ այսքան ոսկի լինի:

—Բաւական ոսկի ունեմ, ասաց Միդասը. բայց որ գիտենաս թէ բոլոր կեանքս փչացրի այս ոսկին դիզելու համար՝ մի մեծ բան չէ ունեցածս:

Եթէ մարդ հազար տարի ապրի, կարելի է որ միայն այն ժամանակը կարողանայ հարստանալ:

—Ի՛նչ, աղաղակեց օտարականը. ուրեմն դու գոհ չե՞ս:

Միդասը գլուխը շարժեց:

—Աստ խնդրեմ, դու ի՞նչ բանով գոհ կը լինես,

հարցրեց օտարականը. ես շատ եմ ցանկանում այդ բանը իմանալ:

Միդասը լուռ կացաւ ու մտածեց. յետոյ ասաց.

—Ես միայն մի ցանկութիւն ունեմ:

—Աստ տեսնեմ քո ցանկութիւնը, ասաց օտարականը:

Միդասը պատասխան տուեց.

—Իմ բոլոր ցանկութիւնը այն է, որ այն բաները, որ ես շօշափեմ՝ ոսկի դառնան:

—Ոսկէ շօշափելի՞ք ես ուզում, հա՛, աղաղակեց օտարականը. բայց հաստատ գիտե՞ս որ դորանով գոհ կը լինես:

—Ի՛նչպէս չէ, ասաց Միդասը:

—Եւ մի՞թէ չե՞ս զղջայ, երբ այդ ցանկութիւնդ կատարուած տեսնես:

—Ինչո՞ւ պէտք է զղջամ, ասաց Միդասը. ես բոլորովին երջանիկ կը լինեմ, եթէ այդ ցանկութիւնս կատարուած լինի:

—Ուրեմն, թո՛ղ կատարուի քո ցանկութիւնը, ասաց օտարականը. վաղը, հէնց որ արևը ծագի, ոսկէ շօշափելիքը կը ստանաս:

Բ.

Այն գիշերը Միդաս թագաւորի քունը չտարաւ:

Առաւօտեան արշալուսին արևը դեռ նոր էր ծագել բլուրների վերայ, երբ Միդասը արդէն աչքերը խօշոր բաց էր արել:

Թագաւորը կամեցաւ իմանալ՝ արդեօք ստացել է ոսկէ շօշափելիքը, թէ ո՛չ:

Մատր զանազան բաների վերայ դրեց. բայց սաստիկ տխրեցաւ, երբ նկատեց որ ոչ մի բան ոսկի չէր գտնուած:

Նա սաստիկ նեղացաւ այս բանի վերայ և բոլորովին յոյսը կտրեց:

Յանկարծ արևի առաջին ճառագայթը ներս մտաւ իւր լուսամուտից և լուսաւորեց իւր ննջարանի առաստաղը: Թագաւորը ցած նայեց իւր անկողնի վերայ. Տէր Աստուած, որչափ ուրախացաւ, երբ նկատեց որ իւր սաւանը բարակ ոսկի է դարձել:

Արևի առաջին ճառագայթի հետ եկել էր իւր ցանկացած ոսկէ շոշափելիքը:

Ուրախութիւնից Միդասի խելքը գնաց, վազեց սենեակի մէջ, և ինչ պատահեցաւ, բռնեց:

Մահճակալի մի տախտակը բռնեց, և տախտակը իսկոյն ոսկի դարձաւ. լուսամուտի վարագոյրը քաշեց, որ այդ հրաշքը լաւ տեսնէ, և վարագոյրի կտաւը ձեռքի մէջ ծանրացաւ, ոսկի դարձաւ:

Շուտով շորերը հագաւ և անչափ ուրախացաւ, երբ մի ձեռք ոսկէ շորեր տեսաւ, թէև այս բեռը մի քիչ ծանր էր:

Միդաս թագաւորը այնչափ հարստացաւ, որ իւր պալատը հիմա փոքր էր թուում իրան:

Ուստի վեր կացաւ պարտէզը գնաց:

Պարտիզումը շատ սիրուն նորաբողբոջ վարդենիներ և ուրիշ ծաղկներ կային:

Նա անց կացաւ բոլոր ծաղկների միջովը, ձեռքը դիպցրեց ամէն մէկին, և բոլոր ծաղկները ոսկի դարձան:

Դեռ այդ ոչինչ. ծաղկների վերայ եղած որդերն էլ ոսկի դարձան:

Առաւօտեան զով ու մաքուր օդը թագաւորի ախորժակը այնպէս էր բաց արել, որ մի խորոված գառը ողջ ողջ կուլ կը տար:

Եւ նա շուտով վերադարձաւ պալատը՝ նախաճաշիկ անելու:

Միգասը նստեց սեղանի մօտ, մի բաժակ վեր առաւ և գինի լցրեց:

Բայց բաժակը սեղանի վերայ դրեց թէ չէ՝ իսկոյն ոսկի դարձաւ:

Չմարտիտ է, Միդասը սորա վերայ շատ ուրախացաւ. բայց մի և նոյն ժամանակը շատ շփոթուեցաւ, և չգիտէր թէ ինչպէս անի, որ իւր գանձը ձեռքից չըլափըշտակեն, որ ապահով լինի և հանգիստ սրտով քուն մտնի:

Նա դեռ այդ բանի վերայ էր մտածում, մէկ էլ նայեց. ինչ տեսաւ. բերանը տարած գինին իսկոյն հալուած ոսկի դարձաւ և լետոյ պնդացաւ:

—Հա, հա, հա, ձայն տուեց Միդասը բոլորովին ապշած: Յետոյ սկսեց կերակուրը ուտել. բայց հէնց որ ձեռքը դիպցրեց տաք տաք խորովածին, իսկոյն այն էլ ոսկի դարձաւ:

—Այս ինչ բան է, աղաղակեց Միդասը, այսպիսի համով նախաճաշիկ ունենամ առաջս ու չկարողանամ ուտել:

Ես այս հարստութեան մէջ բոլորովին սովամահ պէտք է լինեմ:

Ք.

Յիրաւի, ամենաողբատ մշակը, որ իւր սեղանի վերայ մի կտոր հացից և մի բաժակ ջրից աւելի ոչինչ չունի, աւելի բաղդաւոր էր, քան թէ Միդաս թագաւորը:

Միդասը սկսեց մտածել, թէ յիրաւի ոսկի՞ն է ամենացանկալի բանը աշխարհիս երեսին:

Թագաւորը շատ տրտմեցաւ, երբ տեսաւ որ ինչ բանի ձեռք էր դիպցնում, քոլորը ոսկի էր դառնում:

Նա սկսեց լաց լինել և ցանկանում էր որ ինքը աշխարհիս ամենախեղճ մարդը լինէր:

Այս լուսահատ դրութեան ժամանակ նա յանկարծ տեսաւ մի օտարական, որ կանգնած էր դրան մօտ:

Միդասը գլուխը բարձրացրեց, առանց ձայն հանելու, որովհետեւ տեսաւ որ միեւնոյն օտարականն էր որ իրան տուել էր ոսկէ շօշափելիքը, որ ամէն բան ոսկի էր շինում:

— Ե՛, Միդաս բարեկամ, ասաց օտարականը, ասան ինձ ինչպէս է, լաւ է քեզ համար այդ ոսկէ պարգևը:

Միդասը գլուխը շարժեց և ասաց, — Ես շատ տարաբաղտ եմ:

— Շատ տարաբաղդ, իրան, ասաց օտարականը. մի թէ ես չկատարեցի՞ քո սրտի ցանկութիւնը. միթէ ի՛նչ բանի ձեռք տուիր՞ ոսկի չդարձաւ:

— Ոսկին ամէն բան չէ, պատասխանեց Միդասը:

— Ե՛, ուրեմն արդէն խելքդ գլուխդ է եկել, ասաց օտարականը. տեսնե՞ք հիմա ի՛նչ պէտք է անես:

Ո՞րն աւելի լաւ է, Միդաս, ամէն բան ոսկի դարձնելու շնորհքը, թէ մի բաժակ սառն ու վճիտ ջուրը:

— Ո՛հ, օրհնեալ ջուրը, աղաղակեց Միդասը. միթէ ջուրը էլ չպէտք է թրջի իմ պապակած բերանս:

— Ո՞րն աւելի լաւ է, շարունակեց օտարականը, ոսկէ շօշափելիքը, թէ մի պատառ հաց:

— Մի պատառ հացը աշխարհիս բոլոր ոսկուցը լաւ է, աղաղակեց Միդասը:

— Ուրեմն, ասաց օտարականը, հիմա արդէն հասկանում ես, որ այն հասարակ բաները, որ ամէն մարդ ունի, աւելի գին ունեն, քան թէ ոսկին ու արծաթը:

Հիմա ճշմարիտն ասան, չես ցանկանում, որ ազատուես այդ ոսկէ շօշափելիքից:

— Ո՛հ, սաստիկ ցանկանում եմ:

— Ուրեմն գնան պարտէզդ և մտի՛ր այն առուի մէջ, որ անց է կենում պարտիզիդ միջովը:

Մի ամանով էլ ջուր վեր առ այն առուի ջրիցը. լետոյ նորանով սրսկի՛ր այն ամէն բաները, որ ուղում ես ոսկուց կրկին փոխել առաջուայ նիւթը շինել:

Եթէ այդպէս անես՝ կ'ազատուես այն ցաւից որի պատճառը քո ազահութիւնն էր:

Միդաս թագաւորը գլուխ տուեց, և երբ լետ նայեց, տեսաւ որ օտարականը արդէն հեռացել էր:

Ք.

Այն ժամանակ Միդասը շուտով մի մեծ աման վեր առաւ. բայց ափսոս, հէնց որ ձեռքը ամանին դիպաւ, իսկոյն ամանը ոսկի դարձաւ:

Յետոյ վագեց առուի կողմը. երբ ափը հասաւ, գլխիվայր ջուրն ընկաւ. նա ամանը ջրով լցրեց, և սրջափ ուրախացաւ, երբ տեսաւ որ ոսկին հասարակ ու

լաւ հող դարձաւ, ինչպէս որ դիպչելուց առաջ էր:
Միդասը իւր մէջն էլ փոփոխութիւն զգաց. կարծեց թէ իւր սրտի վերայից մի սառը և ծանր բեռք վայր ընկաւ:

Առուի ափին մի մանուշակ տեսաւ, ձեռքը դիպցրէց և չափազանց ուրախացաւ, որ այդ ծաղիկը իւր գոյնով մնաց ու դեղին ոսկի չդարձաւ:

Աւրեմն ոսկէ շօշափելիքից ազատուել էր:
Ինչքան բաղդաւոր էր:

Միդաս թագաւորը շուտով իւր պալատը զնաց և ջուր սրսկեց այն բաների վերայ, որ ոսկի էին դարձել: Յետոյ պարտէզը զնաց և մնացած ջուրն էլ վարդենիների վերայ սրսկեց:

Վարդենիները իսկայն թողին իրանց դեղին գոյնը և հագարաւոր կարմիր վարդեր բացուեցան:

ԽՈՍԹԻ ՁԵՒԵՐ.— ԽԵՒՔԸ զՆԱՎ.

ԽԵՒՔԸ ՂՐՈՒԽՐ զԱՎ.

Մ Ա Ն Ո Ւ Կ

Հօրըդ համար

Մերուն թռչնիկ,

Մօրըդ համար

Մայիսի ծաղիկ:

Եղբօրդ համար

Կարմիր վարդ,

Քրոջըդ համար

Միրուն գարդ:

Ամէնիս համար

Խաղալիկ,

Աստծու համար

Մի գառնիկ:

Ք ս ա ն ու մ է կ զ Լ խ ի մ է ջ պ ա տ ա հ ա ծ բ ո լ ո Ր

Է, Յ, Օ Լ Ռ

Տառ ունեցող բառերը.

Է.— Ամէն, ամէնք, մէկ, մէկ էլ, մէնակ, մէջ, վեճ, կէս, պէս, ինչպէս, սյսպէս, այդպէս, այնպէս, վերջապէս. գէգ, պարտէգ, դեմք, արդէն, գէպի, սէր, տէր, շէնք, հէնց, կէտ, վերջակէտ, ոսկէ, ոսկեղէն, կոպէկ, հրաւերք, պէժպէժ, վեր ընկնիլ, պէտք է, անպէտք, Ջրօրհնէք.— Աշխէն, Գէորգ, Ներսէս, Բէգէ-
ռիջ:—

Յ.— Յետ, լետոյ, լիսուն, լուսուար, լունիս, լու-
լիս, լանկարծ, լատակ, լոգնիլ, լոյս:—

Օ.— Հօր, մօր, եղբօր, մօտ, մօտենալ, առօք
փառօք, խելօք, աղօթք, արդեօք, տօն, եօթը, այսօր, խօսել, խօսք, շօշափել, շօշափելիք, ստախօս, արօտ, առաւօտ, կօշիկ, կօշկակար, Ջրօրհնէք:—

Ռ.— Առաջ, առաջին, առօք փառօք, առած, առանց, առաւօտ, ամառ, ձմեռ, բառ, գառ, սառ, տառ, ծառ, ծառայ, թոռ, ագռաւ, փառել, Վարդափառ, տակառ, տակոխ, պատուել, պատառ, պատճառ, բեռ, դեռ, ձեռք, անձեռագործ, բռնել, ճանկուել, պառկել, մեռնել, կիսա-
մեռ, թռչել, թռչուն, ուռ, լուռ, կեռաս, ծիծեռնակ, քառասուն, խայտառակ, ճառագայթ, Տեառնընդառաջ, Բէգէռիջ:—

Ս. Կարապետ բարձր է բոլոր,
 ձանբէք ունի ոլոր մոլոր,
 Կ'երթայ կուգայ շատ ուխտաւեր,
 Թէ ձիաւոր, թէ ոտաւոր:
 Մուրադ կուտայ ոտաւորին,
 Զուղաբ կուտայ ձիաւորին:

Խցեր ունի անթիւ անդար,
 Միշտ անպակաս մէջը հիւրեր:
 Իննաղբիւրն է անմահական,
 Տակի ջաղացք խիստ հրաշական:
 Փուռն ու օջախ Ս. Կարապետի,
 Միահատիկ սաղ աշխարհքի:

22:

ՎԵՏ ՀՈԳՈՎ

Ս. մ է ն բ ա ն կ ա ն ե ն ք:

Մի մարդ թագաւորի զինուոր զրուեցաւ և ծառայեց նորան քաջութեամբ: Թագաւորը այդ ժամանակ պատերազմ ունէր: Երբ այդ պատերազմը վերջացաւ, թագաւորը նորան ուղարկեց իւր հայրենիքը՝ առանց վարձը տալու:

Զինուորին դուր չեկաւ այս խաբեբայութիւնը.

ուստի մտքուձր դրեց որ՝ եթէ կարողանայ ընկեր գրտնել, ստիպէ թագաւորին որ իւր բոլոր գանձը տայ այդ անիրաւութեան համար:

Ա.

Նա բարկացած մտաւ անտառը և տեսաւ այնտեղ մի մարդ, որ մի ձեռքով վեց ծառ էր արմատախիլ անում. այնպէս որ, կարծես թէ այդ ծառերը հասարակ խոտ լինէին:

Զինուորը հարցրեց այդ ուժեղ մարդուն.

— Ձեռ կամենայ ինձ հետ զալ և ինձ ծառայ դառնալ:

— Մեծ ուրախութեամբ, պատասխանեց ուժեղը. միայն առաջ պէտք է այս խոռը՝ տանեմ մօրս տամ:

Եւ առնելով ծառերից մէկը՝ կապեց նորանով միւսները, խոռը շալակեց և տուն տարաւ: Երբ վերադարձաւ, զինուորը ասաց նորան.

— Մենք երկու հոգով ամէն բան կ'անենք:

Բ.

Մի փոքր առաջ գնացին և պատահեցան մի որսորդի, որ ծնկաչոք ուղղում էր իւր հրացանը...:

Զինուորը հարցրեց.

— Այ որսորդ, ումն ես ուղղում հրացանդ:

Նա պատասխանեց.

—Այստեղից տասը վերստ հեռու, մի կաղնու ճիւղի վերայ նստած է մի ճանճ. ես ուզում եմ նորա ձախ աչքին խփել:

—Օհ, արի ինձ հետ, ասաց զինուորը. երեք հոգով ամէն բան կ'անենք:

Ք.

Ռրսորդը գնաց նորա ետեից և նոքա հասան եօթը հողմաղացի, որ արագ արագ պտտուում էին իրանց թւերով, թէև դեռ ևս ոչ մի կողմից քամի չկար. այնպէս որ տերևներն էլ չէին շարժուում:

Զինուորը ասաց.

—Զարմանում եմ, թէ ինչպէս է պտտուում այս հողմաղացը, երբ օդը բոլորովին անշարժ է:

Երբ նոքա այդ տեղից տասը վերստ հեռացան, ծաւի վերայ մի մարդ տեսան, որ բերանի կէսը փակած փչում էր:

—Ի՞նչ ես փչում այդտեղ, հարցրեց զինուորը:

Նա պատասխանեց.

—Տասը վերստ այստեղից հեռու, ինչպէս տեսնում էք, սիրելի, կայ եօթը հողմաղաց. ես փչում եմ որ նոքա պտույտ դան:

—Օհ, գնանք, ասաց զինուորը. չորս հոգով ամէն բան կ'անենք:

Նա իջաւ ծառից, և գնացին:

Ք.

Մի քանի ժամանակից լետոյ նոքա պատահեցան մէկ միտանի մարդու, որ միւս սուրը ծալել նստել էր:

—Ս.՛ զարմանալի մարդ, ասաց զինուորը. երևի ուզում է հանգստանալ:

—Ես արագագնաց եմ, պատասխանեց միտանին. շատ արագ չգնալու համար՝ մի սուրը ծալեցի. որովհետև երկու սուրով այնպէս արագ եմ վազում, որ ծիծեռնակն էլ չէ կարող ետեիցս հասնել:

—Օհ, արի ինձ հետ, ասաց զինուորը. հինգ հոգով ամէն բան կ'անենք:

Ե.

Սրագագնացը գնաց նոցա հետ. և նոքա շուտով պատահեցան մի մարդու, որի գլուխը մինչև ականջները ծածկուած էր մի փոքրիկ գլխարկով:

Զինուորը ասաց նորան.

—Թէպէտ դուք շատ պատուական մարդ էք երևում, բայց ես խորհուրդ եմ տալիս ձեզ որ ձեր գլխարկը ուղիղ ծածկէք. որովհետև այդպէս շատ ծիծաղելի էք թւում:

—Ամենևին այդպէս չէ, պատասխանեց նա, դուք սխալուում էք. որովհետև երբ ես ուղիղ եմ ծածկում գլխարկս, օդը այնպէս ցրտում է որ թռչունները մէջը սառչում են և սատկած վայր են ընկնում գետնին:

—Օհ, ուրեմն գնանք միասին, ասաց զինուորը. վեց հոգով ամէն բան կ'անենք:

Զ.

Նոքա միացան և վեց հոգով գնացին քաղաք: Այնտեղ թագաւորը հրատարակել էր թէ. «Ո՛վ կարողանայ վիճել իմ աղջկայ հետ վազելու մէջ, նորան իմ փեսայ

կը շինեմ, եթէ նորա առաջը կտրի. իսկ եթէ չեա մնայ, կը սպանուի»:

Ձինուորը ներկայացաւ թագաւորին և հրաման խնդրեց որ իւր փոխանակ իւր ծառաներից մէկին ուզարկէ:

—Շատ լաւ, պատասխանեց թագաւորը. բայց, եթէ նա յաղթուի, այն ժամանակ նորա գլուխն էլ կը կտրեմ, քոնն էլ:

Ձինուորը համաձայնեցաւ այս պայմանին և հրամայեց իւր արագագնացին որ շուտով երկու ոտքով վազէ ու յաղթէ թագաւորի աղջկան: Այսպէս էր պայման դրած, որ նա կը լինի յաղթողը, ո՛վ առաջ առաջ ջուր կը բերէ այն աղբիւրից, որ գտնուում է քաղաքից շատ հեռու:

Մի թաս տուին թագաւորի աղջկան, մի թաս էլ տուին արագագնացին, և նոքա միևնույն ժամանակը ճանապարհ ընկան: Դեռ թագաւորի աղջիկը հազիւ մի քանի քայլ էր վազել, որ արագագնացը արդէն աներեւոյթացաւ աչքից, հասաւ աղբիւրը, առաւ ջուրը և յետ դարձաւ: Բայց ճանապարհին յոգնեց՝ թասը դրեց գետնին ու պառկեց մի սատկած ձիու գանկի վերայ, որ ընկած էր ճանապարհին: Այդ այն մտքով արեց, որ բարձի կոշտութիւնը չթողնէ իրան երկար քրնելու:

Իսկ այս միջոցին թագաւորի աղջիկը բոլոր ուժով վազելով հասաւ աղբիւրը, լցրեց բաժակը և շտապով յետ դարձաւ:

Նա պատահեցաւ արագագնացին և նորան քնած տեսաւ:

—Լաւ, ասաց ինքն իրան ուրախացած. հիմա թըշնամին իմ ձեռքումն է:

Այս ասելով թափեց նորա թասի ջուրը և շարունակեց իւր ճանապարհը:

Ամէն բան կորած պէտք է լինէր, եթէ քնած մարդու բաղդից, պալատի տանիքի վերայ կանգնած ուր ուր դը չտեսնէր այս թշնամութիւնը իւր հեռատես աչքերով:

—Հըմ, ասաց նա, լաւ չի լինի, եթէ թագաւորի աղջիկը յաղթէ արագագնացին:

Այս ասաց ու իւր հրացանի մի հարուածով թըռցրեց նորա գլխի տակի բարձը, այսինքն ձիու գանկը՝ առանց մի վնաս պատճառե լուծնորան: Արագագնացը իսկոյն զարթեց հրացանի ձայնից, տեսաւ դատարկ թասը և հասկացաւ թէ բանը ինչո՞ւմն է: Ի՛նչ և էիցէ առանց շփոթուելու, նորից գնաց աղբիւրը, նորից լցրեց թասը և դարձաւ պալատը թագաւորի աղջկանից տասը ընկալէ վաղ:

Է.

Թագաւորն ու իւր աղջիկը ամենևին չհաւանեցան որ մի չքաւոր զինուոր յաղթեց: Այս պատճառով վրձուեցին որ նորան իւր բոլոր ընկերների հետ սպանեն: Թագաւորը նոցա հրակիրեց ու փակեց մի սենեակում: Իսկ այդ սենեակի յատակը, դրներն ու լուսամուտները երկաթիցն էին շինուած: Սենեակի մէջ տեղը դրուած էր մի սեղան՝ համադամ կերակուրներով զարդարուած:

—Մտէք, ասաց թագաւորը, և անո՞ւշ արէք:

Եւ, երբ նոքա ներս մտան, իսկոյն հրամայեց որ

բոլոր դրներն ու լուսամուտները փակեն դրսից պարզունակներով: Յետոյ կանչեց իւր խոհարարին որ այդ սենեակի տակը կրակ վառէ և այնքան պահէ կրակը մինչև որ յատակը բոլորովին կարմրի:

Թագաւորի հրամանը կատարուեցաւ, և մեր վեց հիւրերը լաւ տաքացան կարմրեցան: Առաջ նոքա կարծեցին թէ այն պատճառով են այնչափ տաքացել, որ մեծ ախորժակով են ուտում համեղ կերակուրները: Բայց, տաքութիւնը հետզհետէ սաստկանում էր. այս պատճառով նոքա վեր կացան և ուզում էին դուրս գնալ: Տարաբախտաբար բոլոր դրներն ու լուսամուտները փակուած էին. և հիմա նոր իմացան թագաւորի չար միտքը:

— Ո՛չինչ. մի ք վախենալ, ասաց փոքրիկ գլխարկաւոր մարդը. ես այնպիսի ցուրտ կը բերեմ, որ կրակի բոլոր զօրութիւնը կ'ոչնչանալ:

Այս ասելով գլխարկը ծածկեց, ինչպէս պէտք էր: Իսկոյն այնպէս սաստիկ ցուրտ ընկաւ որ նոյն րոպէին բոլոր տաքութիւնը անց կացաւ և սեղանի վերայ եզած ամանները սառեցան, սառոյց դարձան:

Երկու ժամից յետոյ, թագաւորը՝ կարծելով թէ նոքա արդէն խորոված կը լինեն, հրամայեց որ դուռը բաց անեն. և ինքը գնաց իւր աչքով տեսնելու նոցա գրութիւնը: Բայց սրբան զարմացաւ, երբ տեսաւ որ այն վեց հոգիները, որոնք պէտք է այրուէին՝ ուրախ ուրախ վազեցին նորա դէմը ու խնդրեցին որ թոյլ տայ իրանց մի քիչ դուրսը տաքանալու, որովհետև «սենեակում, ասացին, այնպէս ցուրտ է որ բոլոր ամանները սառել են»:

բոլոր թագաւորը բարկացած ու շուարած՝ դարձաւ խոհարարին հարցրեց.

— Ինչո՞ւ դու չես կատարել իմ հրամանը: —

Իսկ խոհարարը պատասխանեց. — Թագաւորն անպարտ կենայ, սես այնքան տաքացրել եմ որ յատակը կարմրել է. ինքները նայեցէք: Բայց թագաւորը նայեց, տեսաւ որ չիրաւի յատակի տակը անրսափելի կրակ էր վառուած: Բայց թէ ինչ էր պատճառը որ նոքա չայրուեցան, այդ ոչոք չկարողացաւ իմանալ:

— Ինչո՞ւ դու չես անպարտ կենալ, որոնք քեզ անպարտ կը անալ:

Թագաւորը մի հնարք էր որոնում, որ այդ անպարտան հիւրերից մի կերպով ազատուի. այս պատճառով կանչեց զինուորին և ասաց.

— Եթէ դու հրաժարուես իմ աղջկայ հետ ամուսնանալուց, ինչքան ոսկի ուզես՝ կը տամ քեզ:

— Ուրախութեամբ, համաձայն եմ, Ձերդ Մեծութիւն, պատասխանեց զինուորը. տուէք ինձ այնքան ոսկի որքան կարող է տանել իմ ծառաներից մէկը, և և ես կը հրաժարուեմ ձեր աղջկանից:

Թագաւորը անասելի կերպով ուրախացաւ: Զինուորը ասաց նորան, որ երկու շաբաթից յետոյ կը գնայ ոսկին ստանալու:

Յետոյ կանչեց այն երկրի բոլոր գերձակներին և վարձեց նոցա երկու շաբաթով մի մեծ պարկ կարելու: Երբ այդ պարկը պատրաստուեցաւ, այն ուժեղը, որ մի ձեռքով ահագին ծառեր էր արմատախիչ անում, պարկը շալակեց և գնաց թագաւորի պալատը:

երբ թագաւորը հեռուից տեսաւ նորան, հարցրեց իւր մօտ եղած մարդկանցը.

—Ո՞վ է այն քաջը, որ մի տան մեծութեամբ պարկը ուսին դրած՝ գալիս է: Եւ, երբ իմացաւ որ նա գալիս է այն սարսափելի պարկով ոսկի տանելու, շատ վախեցաւ: Նա հրամայեց որ գլորեն մի մեծ տակառ ոսկի, որ տասնուվեց մարդ հազիւ էին կարողանում տեղիցը շարժել: Բայց սմբռ քաջը բռնեց մի ձեռքով, ձգեց պարկը և սկսեց տըրտնջալ թէ.

—Ձեր բերած ոսկին այնքան չնչին բան է, որ պարկի տակն էլ չկարողացաւ ծածկել: Թագաւորը հրամայեց որ բերեն իւր բոլոր գանձը: Բերին ու լցրին. բայց դեռ էլի պարկի կէսը դատարկ մնաց:

—Է՛լի բերէք, աղաղակում էր զինուորը, երկու կտոր փշրանքով մարդ չէք կշտացնի: Բերին դարձեալ եօթը հարիւր սալ ոսկի տէրութեան ամէն կողմերից: Բայց մեր քաջը այդ բոլոր սայլերը՝ իրանց մէջ լծուած եզներովը՝ սայլապանների հետ միասին ձգեց պարկի մէջ:

Յետոյ ասաց. —Հիմա, արդէն ինչ որ պատահի, կը ձգեմ մէջը, որ շուտով լցուի վերջանայ:

Եւ ձգեց նա, ինչ որ պատահեցաւ. բայց պարկումը դեռ շատ դատարկ տեղ մնաց:

—Է՛հ, վերջացնենք շուտով, ասաց նա. և պարկի բերանը կապելով՝ դրեց ուսին ու ճանապարհ ընկաւ իւր ընկերների հետ:

բնացի մայրաքաղաք զճմաք զոյս **Թ.** բմի ացում իսի
— ան զճան ակնին մ զյին բմացի միբմանեաց մնոս

Երբ թագաւորը տեսաւ որ մի մարդ տանում է իւր տէրութեան բոլոր գանձը՝ սաստիկ բարկացաւ և հրամայեց իւր ձիաւոր զօրքին որ վազեն նորա ետեից և յափշտակեն բոլոր ոսկին:

Շուտով զօրքերը ձի հեծան և հասան նոցա ետեւից կանչելով:

—Է՛յ դուք փախստականներ, անպիտան աւազակներ, տուէք մեզ այդ ոսկով լցրած պարկը, եթէ ոչ այս ըոպէիս կտոր կտոր կ'անենք ձեզ:

—Ի՛նչ էք դուրս տալիս գլխներիցդ, ասաց նոցա ու ժողով փչողը. մենք փախստական ենք: Ո՛չ, սիրելիք, դեռ դուք մի քիչ օդումը խաղ արէք...:

